

Դավիթ Վ. Գասպարյան
Բանասիր. գիտ. դոկտոր

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ 1937 ԹՎԱԿԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԲՈՎՈՒՄ**

Ծննդյան 125-ամյակի առթիվ*

Բանալի բառեր – Խանջյան, Կենտկոմ, գրողների միություն, քաղաքական բռնություններ, հավատաքննություն, բանտ, պատմություն:

Մուտք

Չարենցի կյանքի վերջին տարին ու մի քանի ամիսները համընկել են 1936 թ. հուլիսի 9-ին Աղասի Խանջյանի սպանությունից հետո ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնում նշանակված Ամատունու պաշտոնավարմանը¹:

Չարենցն այն հեղինակությունն էր, որ մշտապես անմիջական կապ է ունեցել Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղարների հետ. արտակարգ ջերմ էին նրա հարաբերությունները Ալեքսանդր Մյասնիկյանի հետ, որի օրոք տպագրվեց նրա «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակը (Մոսկվա, 1922), և որի անմիջական աջակցությամբ Չարենցը մեկնեց արտասահմանյան երկարատև ուղևորության (1924, նոյեմբեր – 1925, հուլիս):

Շատ ջերմ էին Չարենցի հարաբերությունները նաև Աղասի Խանջյանի հետ. Խանջյանը գիտեր Չարենցի արժեքն ու նշանակությունը և ամեն կերպ աջակցում էր նրան: Չմոռանանք՝ նրա օրոք հնարավոր եղավ Բե-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 30.04.2022:

1 **Ամատունի Սիմոնի Վարդապետյանը** (1900, Գանձակ – 1938, Մոսկվա) համարվում էր Բերիայի կադրը և ամեն կերպ խոչընդոտում էր Խանջյանի գործունեությունը: Ինքնակենսագրության մեջ՝ գրված 1937 թ. հուլիսին իր ծեռքով, նշում է. «Աշխատել եմ ՀԿ(Բ)Կ-ում ազիտվարիչ, Կենտկոմի բյուրոյի անդամ, Երևանի կուսակցական շրջանային կոմիտեի քարտուղար, իսկ հետո ՀԿ(Բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղար (Վ. 1928 թ. մինչև XII. 1930 թ.):»: Այնուհետև աշխատել է Թիֆլիսում, Բաքվում (Բաքվի կոմիտեի երկրորդ քարտուղար), «իսկ տարվա վերջից Հայաստանում երկրորդ քարտուղար, վերջին տարին աշխատում եմ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար»:

վվեմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 2 (78), ապրիլ-հունիս, 2022

րիայի դրածոների կողմից արգելված «Գիրք ճանապարհի» ժողովածուի հրատարակությունը, ապա Անդրերկրկոմի շրջանակներում Խանջյանի նախաձեռնությամբ լուծվեց բուժման նպատակով Չարենցի՝ արտասահման մեկնելու թույլտվության հարցը, ինչը, սակայն, նրա սպանությունից հետո չեղարկվեց:

Բայց եկավ Ամատունին, և նրա հետ Չարենցի հարաբերությունները սկզբից ևեթ հարթ չէին. «Չարենցն ասում էր Ամատունուն հայ մշակույթի հանդեպ նրա ամբարտավան վերաբերմունքի համար...»²: Ժամանակակիցների վկայությամբ՝ Չարենցի գլխավորությամբ գործող՝ Պուշկինի մահվան 100-րդ տարելիցի առիթով ստեղծված հանրապետական հանձնաժողովի խորհրդակցություններից մեկի ժամանակ, երբ դեռ Խանջյանը ողջ էր, Չարենցը Ամատունուն ասել է. «Ի՞նչ ես դուրս տալիս լուրջ խորհրդակցության ժամանակ: Գոնե լռի՛ր, հիմա՛ր»³:

1. Ժամանակն ու միջավայրը

Ինչպես գրական, այնպես և քաղաքական միջավայրը գոեհիկ էր ու կոպիտ, հատկապես 1935-1937 թվականներին: 1935 թ. փետրվար-մարտ-ապրիլ ամիսներին որպես «սահաբեկչի» ու «նացիոնալիստի»՝ Չարենցին ենթարկել են բազմակի հարցաքննությունների, մարտի 7-ին՝ հեռացրել Հայպետհրատում զբաղեցրած պաշտոնից, իսկ մարտի 13-ին՝ իր ծննդյան օրը՝ Հայաստանի գրողների միության շարքերից: Ամենուր իշխում էին կասկածամտությունը, մատնությունը, գրպարտությունը, մեղադրանքը, ձերբակալությունը, հարցաքննությունը, դատն ու դատավճիռը: Չարենցը շրջապատված էր նաև լրտեսներով, որոնց մատնագրերը պահպանվել են: Հավատաքննությունը մեծ թափ էր ստացել ամբողջ ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ նաև Հայաստանում:

Չարենցն առողջական, հոգեբանական շատ ծանր վիճակում էր. Խանջյանի սպանությամբ, ինչպես նշեցինք, ի չիք դարձավ փրկության վերջին հույսը՝ բուժման նպատակով արտասահման մեկնելու օրախնդիր հարցը: Հոգեբանական այս վիճակն արտացոլվել է նրա բազմաթիվ ստեղծագործություններում, նաև 1936 թ. օգոստոսի 8-ին երկու տարբերակով գրած «Խոհ» բանաստեղծության մեջ.

**Ե՛վ բիրտ, և՛ գոեհ, և՛ հոռի է քո
Ոգին՝ դարերի տաժանքից ելած,-**

2 **Խորեն Ռադիո**, Չարենցը որպես մարդ և ստեղծագործող, «Հայոց լեզու և գրականություն», Եր., 2017, N 5, էջ 53:

3 Նույն տեղում:

Որպես դարավոր դաշտ սմբակակոխ՝
 Բյուր բանակաների ոտքերով փորած...
 Քո վրա ընկած սերմերն հանճարեղ
 Ոչ շող են տեսել, ոչ մայրական գիրկը-
 Քեզ չի՛ գուրգուրել և ո՛չ մի արև,
 Եվ ո՛չ մի շողով հորդառատ երկինք:-
 Էլ ո՞նց ելնեին հերկերից քո բիրտ
 Ազնիվ ցողուններ՝ և՛ նուրբ, և՛ ոսկուն,-
 Էլ ո՞նց մերկանար արևոտ մի սիրտ
 Բանաստեղծներիդ հանճարեղ խոսքում⁴....

1936 թ. օգոստոսի 26-ին՝ քաղաքական հալածանքների ամենաթեժ օրերին, Ծաղկաձորում Չարենցը գրում է «26. VIII. 1936» վերնագրված բանաստեղծությունը, որը 1935 թ. փետրվարից սաստկացած իր հարցաքննությունների շատ գաղտնիքներ է բացահայտում.

...Եվ ի՞նչ պատահեց կյանքում արդարև,
 Որ ձեռքս հանկարծ հոժար, ինքնիրեն,
 Իմ գրած բոլոր տողերի վերև
 Չոր թվականներ սկսեց գրել...
 Եվ վերնագրերն այդ սովորական,
 Որ բառեր էին՝ գրված թանաքով,-
 Խորհրդանիշեր դարձան մոգական՝
 Ինչպես խաչն առաջ – մա՛հ նշանակող⁵:

Նույն օրը, աչքի առաջ գրական մարդկանց ողբերգական ճակատագրերը, նույն վերնագրով՝ «26 օգոստոսի 1936 թ.», գրում է հերթական բանաստեղծությունը.

Իսկ այսօր,- ո՛չ՝ երեկ գիշեր-
 Եղել են մարդիկ և քայլել զգաստ,-
 Հասել են, տեսել գերեզման պատրաստ-
 Եվ մահն է հանկարծ ողջը մշուշել⁶....

Այս ամենը պայմանավորված էր նրանով, որ Խանջանից հետո սկսվեցին քաղաքական շուրջկալներն ու ձեռբակալությունները: Գրական-մշակութային, կուսակցական, տնտեսական բնագավառների բոլոր աշխատողները

4 Չարենց Ե., Գիրք մնացորդաց, Եր., «Տիգրան Մեծ», 2017, էջ 167:

5 Չարենց Ե., Անտիպ և չիավաքված երկեր, Եր., ԳԱ հրատ., 1983, էջ 147:

6 Չարենց Ե., Վերջին խոսք, Եր., «Հայագիտակ», 2014, էջ 191:

մեղադրվում էին որպես դավաճան «նացիոնալիստ» Խանջյանի կադրեր և ձերբակալվում: Այս առումով առանձնանում են 1936 թ. օգոստոսի 9-ը և 10-ը, երբ ձերբակալվեցին Ակսել Բակունցը, Գուրգեն Մահարին, Վահրամ Ալազանը, Մկրտիչ Արմենը, Վաղարշակ Նորենցը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, հաջորդ օրերին՝ Պողոս Մակինցյանը, Հարություն Սուրխաթյանը, Վահան Թոթովենցը, Զապել Եսայանը, Մկրտիչ Զանսանը և շատ ուրիշներ: Իսկ մինչ այդ արդեն ձերբակալվել էին Լեռ Կամսարը, Ներսիկ Ստեփանյանը...

Չարենցը դեռևս դրսում էր և ծանր խոհերով վերապրում էր կատարվածը թե՛ առանձին անհատների ճակատագրի առումով, թե՛ ամբողջ հայ ժողովրդի ու Հայաստանի: 1936 թ. օգոստոսի 29-ին Ծաղկաձորում սկսում և 1937 թ. փետրվարի 17-ին (406-րդ տողից հետո արված մեկ այլ նշումով՝ մարտի 17-ին) Երևանում ավարտում է «Որպես գորշ, դեղին տերևներ...» տողով սկսվող պոեմը՝ իր օրերի քաղաքական հալածանքների անդրադարձով, նվիրված հայ ժողովրդի, հայ մշակույթի պատմական ճակատագրին: Պոեմում ուրվագծում է վերահաս ողբերգությունը: Օտար դաշտերի քամին քշում է նաիրյան երկրի արևկեր հունդերը, որպեսզի չարմատավորվեն հայրենի հողում, այլ «Թշնամի դաշտերում մեռնեն»: Չարենցը կոչ է անում ոգու ամրության, որպեսզի ստալինյան ցեցը չուտի ժողովրդի դարավոր միջուկը (որոշ բանալի բառեր գրել է մեծատառ)։

**Որպես գորշ, դեղին տերևներ,
Ցրում է Հողմը, ցրում
Անդադար սերնդե սերունդ-
Նաիրյան երգի արևկեր,
Աներկիր հունտը անմահ,
Որ վաղո՛ւց, իր հողից հեռու՝
Ե՛վ դարեր առաջ, և՛ հիմա-
Քշվել է տաշեղի նման
Աշխարհի բոլո՛ր բացերում....**

**Եվ կրկին, որպես տերևներ,
Քշում է հողմը նրանց,
Որ չընկնեն, նրանք, չամբանան
Հայրենի հողերի վրա,-
Այլ, իբրև դեղին տերևներ,
Թշնամի դաշտերում մեռնեն....
<...> Հայրենի հողմն է ահա ժանտ
Հալածում նրանց բիրտ ու զազիր⁷....**

7 Չարենց Ե., Նորահայտ էջեր, Եր., 1996, էջ 55-57:

Չամբողջացած շարք են ձևավորում քաղաքական աշնան մոտիվները. Տերյանի՝ ցնորական սիրո աշնան արցունքոտ անձրևներին, Մահարու՝ մրգահասի արևոտ աշնան բույր ու հնայքին հաջորդում են Չարենցի քաղաքական աշնան կապարե երկինքն ու մահաբեր գնդակների պես «արձիճե շեղջերով» թափվող մահվան անձրևը: Չարենցի այս գործերը կա՛մ ամբողջական են, կա՛մ պատահիկներ՝ ստեղծված 1936 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին՝ «Աշնան երգ» («Շրշում են անվերջ տերևները»), «Աշնան երգ» («Ծնծղանե՛ր, աշնան ծնծղաներ»), «29. IX. 1936», «...Եղե՛լ է արդյոք երբևէ» (Տերյանի «Աշնան երգ»-ից ունի բնաբան՝ «Տերևները դեղին // Ծածկեցին իմ ուղին», բնագրում՝ «Տերևները դեղին պատեցին իմ ուղին»): Աշնանային շարքը շարունակում են հոկտեմբերի 1-ին գրած «Աշունը, ա՛խ, այնպես անցավ...», նույն օրերին ստեղծված «Նույն երգն է կրկնում աշունը...», «Ցո՛ւրտ է, աշո՛ւն է, բայց լուրթ գիշերներ են դեռ», «Շաչում է այս աշնան քամին...», «Ե՛րբ, արդյոք ե՛րբ դու դարձար, սի՛րտ, այդքան խեղճ ու հլու...» բանաստեղծությունները: Քաղաքական սառը աշնան հողմերն են՝ այսպիսի անդրադարձներով.

**Աշունը, ա՛խ, այնպես անցավ՝
Ե՛վ ցնցող, և՛ ծանր, ինչպես՝
Հանճարեղ ոճիր կամ հանցանք:**

**Ցերեկները ծնծղաներ հնչեց,
Ցնծության շեփորներ հնչեղ,-
Գիշերները – դարձավ գառանցանք⁸:**

**Շաչում է աշնան քամին, իբրև հին, դասական Ակվիլոն⁹,
Աշուն է և ծանր անձրևի արձիճե շեղջեր քշելով,
Եվ ավերք, և նեռ գուժելով՝ թռչում է հողմն Ակվիլոն¹⁰:**

2. Չարենցը՝ քաղաքական մեղադրյալ

1936 թ. հոկտեմբերի 13-ին Եղիշե Չարենցը հանդիպում է Ամատունու հետ (ներկա էր նաև ՀԳՄ քարտուղար Գևորգ Աբովը), որից հետո գրում է «Կապված դաշինքով անապական» տողով սկսվող պոեմը և դրանով ողջունում նրան Հայաստանի ղեկավարի պաշտոնում¹¹: Ամենայն հավանականությամբ, այս հանդիպման առիթով է արված «Հիմնականից հիմնականը»

8 Չարենց Ե., Անտիպ և չիավաքված երկեր, էջ 159:

9 Ակվիլոնը հյուսիսային քամին է:

10 Նույն տեղում, էջ 162:

11 Տե՛ն Չարենց Ե., Նորահայտ էջեր, էջ 52-54:

անթվակիր ու բազմահանգույց գրառումը (հնարավոր է նաև 1936-1937 թվականների այլ շարժառիթ՝ դարձյալ կապված Ամատունու հետ):

Ամատունու կերպարի գեղարվեստականացման փորձ է նաև «Ազատ ու ջինջ իմ պոետական...» տողով սկսվող անթվակիր պոեմը՝ գրված հավանաբար 1937 թ. մայիսին: Փոխադարձ հարաբերությունների նախապատմությամբ, այնուամենայնիվ, Չարենցը քայլ է անում դեպի հանրապետության կուսակցական ղեկավարը, որովհետև, ներքին ընդդիմությամբ հանդերձ, իրեն տեսնում էր պետություն կառուցողների շարքերում և ոչ թե ինչ-ինչ պատճառներով պետությունից երես թեքողների: Չարենցի ընդդիմությունն էլ հանուն պետության էր, հանուն ժողովրդի, ինչին, սակայն, տրվեց քաղաքական բովանդակություն, և նա հռչակվեց ժողովրդի թշնամի:

1936 թ. նոյեմբերի 16-ին ՆԳԺԿ մարմինները որոշում են կայացնում Չարենցին, «ըստ ՀԽՍՀ ՔՕ 67, 68 հոդվածների, որպես մեղադրյալ, ենթարկել հետաքննության»¹²: Այդ մասին Չարենցին հայտնում են նույն օրը, և ՀԽՍՀ ՆԳԺԿ վարչության պետ Մուղդուպին ու նրա օգնական Գևորգովը իրականացնում են հարցաքննությունը: Մինչ այդ՝ սեպտեմբերի 24-ին, նրանից վերցրել էին ստորագրություն, ըստ որի՝ իրավունք չունեի բացակայելու քաղաքից:

Չարենցը մեղադրվում էր որպես գրողների հակահեղափոխական, ազգայնամուլական խմբի ղեկավարներից մեկը, ընթացքում ավելանում են նաև տրոցկիստ ու ահաբեկիչ լինելու մեղադրանքները: Չարենցը կտրականապես ժխտում է մեղադրանքները, պաշտպանվում և տալիս բացատրություններ:

«**Հարց.** Դուք մեղադրվում եք նրանում, որ, լինելով գրողների հակահեղափոխական նացիոնալիստական խմբի ղեկավարներից մեկը, տարիների ընթացքում ՀամԿ(բ)Կ-ի և խորհրդային իշխանության դեմ տանում եք հակահեղափոխական աշխատանք: Դուք դա ընդունո՞ւմ եք:

Պատասխան. Ո՛չ: Ես ինձ մեղավոր չեմ ճանաչում: Ես եղել եմ գրողների «Նոյեմբեր» միության կազմակերպիչն ու ղեկավարը, որի մեջ ես ունեցել եմ իմ խումբը հետևյալ կազմով՝ Ես ինքս, Ա. Բակունցը, Մ. Արմենը, Աձեմյանը (Մահարին): Վճռականապես պնդում եմ, որ խումբը ոչ մի հակահեղափոխական նացիոնալիստական աշխատանք չի տարել և այդպիսին չի համարվել»:

Չարենցին հակադարձում են արդեն իսկ բանտարկված գրողներից բռնությամբ ձեռք բերած ցուցմունքներով:

«**Հարց.** Դուք տալիս եք կեղծ ցուցմունք: Ձեր մասնակցությունը հակահեղափոխական խմբի գործունեությանը ապացուցվում է ձերբակալված հակահեղափոխական գրողների ցուցմունքներով: Հետաքննությունը Ձեզանից պահանջում է ձիշտ ցուցմունքներ:

¹² Նույն տեղում, էջ 374:

Պատասխան. Գրողների հակահեղափոխական խմբի ձերբակալված անդամների ցուցմունքները չեն համապատասխանում իրականությանը»:

Անվանապես ներկայացվում են Բակունցից, Վանանդեցուց, Ալազանից, Մահարուց կորզած ցուցմունքները: Չարենցը դրանց պատասխանում է. «Դա կեղծիք է», «Ես դա ժխտում եմ: Ցուցմունքները կեղծ են», «Ես դա չեմ ընդունում որպես ձշմարտություն, ես ժխտում եմ, <...> ցուցմունքները կեղծ են», «Մահարու ցուցմունքների այդ մասը ժխտում եմ»:

Ներսիկ Ստեփանյանի հետ համագործակցության առնչությամբ տալիս է իր դիրքորոշմամբ և գաղափարների ընդհանրությամբ պայմանավորված պատասխան:

Քննիչը ընդհատում է. «Դուք շարունակում եք ստել»:

Ծանրանում են Ն. Ստեփանյանի ցուցմունքի հիման վրա Չարենցին վերագրվող մեղադրանքն ու դրա ժխտումը:

«**Հարց.** Մի՞թե չեք զգում, որ Դուք մոլորվել եք սեփական պատասխանների մեջ և ջանում եք հետաքննությունից թաքցնել ձշմարտությունը: Դուք մտադի՞ր եք տալ ձիշտ ցուցմունք, որ Դուք գրողների հակահեղափոխական նացիոնալիստական խմբի ղեկավարներից մեկն եք և Ն. Ստեփանյանի ու Ա. Բակունցի հետ համատեղ ընդդեմ ՀամԿ(Բ)Կ-ի և խորհրդային իշխանության տարել եք ակտիվ պայքար...»:

Չարենցը ժխտում է նաև այս մեղադրանքը:

Անցնում են ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի՝ պաշտոնից ազատման հանգամանքներին: Չարենցը ձկուն պատասխաններ է տալիս նաև այս հարցերին:

Անցնում են ստեղծագործությանը, «Պատգամ» բանաստեղծության գաղտնագրին, որ երկրորդ տառերի միջնակապով հոդում է. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

«**Պատասխան.** Բայց ես ամենևին դա չեմ համարում հակահեղափոխական դաշնակցական լոզունգ, որովհետև ես նկատի ունեմ ժողովուրդ հասկացությունը՝ սկզբունքորեն տարբեր ազգ տերմինից, որը կիրառում են դաշնակցականները:

Այդ բանաստեղծությունը գրված է 1933 թվականին, երբ դրությունը Հայաստանի լեռնային շրջաններում, ինչպես հայտնի է, աղետալի էր, ինչն էլ իմ գրքի որոշ տեղերում, մասնավորապես այդ լոզունգում, օրյեկտիվ նախադրյալ է հանդիսացել իմ որոշ հոռետեսական տրամադրությունների համար:

Հարց. Ումի՞ց էիք Դուք պատրաստվում փրկել հայ ժողովուրդին:

Պատասխան. Այն ղեկավարներից, որոնք Հայաստանի վերը նշված դրության մեղավորներն են»:

Այստեղ միջանկյալ նշենք, որ գյուղերի վայրագ կոլեկտիվացման կապակցությամբ Չարենցը 1929-1930 թթ. իր խորունկ դժգոհությունն է հայտնել

Խանջանի անմիջական նախորդին՝ ՀԿ(Բ)Կ Կենտրոնի առաջին քարտուղար Հայկազ Կոստանյանին:

Հարցաքննությունը շարունակվում է:

«**Հարց.** Ո՞վ գիտեր այդ հակահեղափոխական լոզունգի մասին:

Պատասխան. Ես ինքս ցույց եմ տվել և այդ լոզունգը կարդացել միայն երկու մարդու՝ Ա. Բակունցին և գրական քննադատ Սուրեն Հարությունյանին:

Հարց. Եթե, ըստ Ձեզ, այդ լոզունգն ամբողջովին հակահեղափոխական չի համարվում, ապա ինչո՞ւ եք Դուք այն այդպես գաղտնագրել:

Պատասխան. Ընդունում եմ, որ չնայած իմ սուբյեկտիվ պատկերացմանը այդ լոզունգի բովանդակության մասին, որպես ոչ հակահեղափոխական, ամբողջությամբ և լրիվ կարող էր ընկալվել որպես հակահեղափոխական»:

Անցնում են Վաղարշակ Տեր-Վահանյանի հետ հանդիպումներին:

Ի վերջո հետաքննությունը եզրակացնում է. «Ձեր պատասխանը հետաքննությունը համարում է բացարձակապես կեղծ»¹³:

Ինչպես Չարենցի, այնպես և մյուս գրողների հարցաքննությունների արձանագրություններն այն ստայնությունն են թելադրում, որ ՆԳԺԿ քննիչներն ունեցել են գրական աջակիցներ, որոնց օգնությամբ էլ նախապես կազմել են հարցերը: Յուրաքանչյուր գրողի հարցում քննիչները չէին կարող այդքան դիպուկ լինել, մանավանդ որ ընդհանրապես կտրված էին հայոց լեզվից, հայ գրականությունից, հայ մշակույթից. Թիֆլիսից Բերիայի կողմից նշանակված ազգասուռները փոխած, ռուսացած հայեր էին: Անշուշտ, ներսից՝ գրողների միությունից, նրանց հետ համագործակցողներ են եղել, զորօրինակ՝ Արտաշես Ոսկերչյանը, Հրաչյա Քոչարը, Սահակ Կիրակոսյանը, Գառնիկ Ղազարյանը, Գևորգ Աբովը և այլ թաքնված անանուն դեմքեր, ինչպես նաև նրանց շքանշանակիր առաջնորդ Նաիրի Զարյանը:

Ամենայն հավանականությամբ, այս օրերին և այս կապակցությամբ է Չարենցն Ամատունուն հասցեագրել նամակ, որի անթվակիր պատասխիկներից մեկում հաճախակի են հանդիպում «դատ», «դատավճիռ» և «վճիռ հանել» արտահայտությունները: Գրությունը պայմանավորված էր դատից առաջ պարզաբանումներ տալու անհրաժեշտությամբ: Դատի ժամանակ նա պիտի հանդես գար ինքնապաշտպանական փաստարկներով. «Միայն այն անհողդողդ համոզմունքը, որ մարդիկ ինչի մեջ էլ ինձ մեղադրեն – գոնե մինչև օրս ոչ մի առիթ չեն ունեցել ինձ մեղադրելու գրական, կամ քաղաքական-հասարակական խարդախության ու երկերեսանիության մեջ, – կամ քծնանքի ու երկչոտության, – միայն այս անհողդողդ համոզմունքն է ահա, որ ինձ ուժ է տալիս դիմել ձեզ՝ **նաև** իբրև ինձ ձանաչող ընկերոջ, նախքան **անվերադարձ** կերպով **վճիռ** հանելը (որ հավասար է կյանքի ու մահվան – ինչ ձևով

13 Հարցաքննությունն ամբողջությամբ տես **Չարենց Ե.**, Նորահայտ էջեր, էջ 359-374:

ել լինի մեղադրանքը) <...>: Միրելի ընկեր, ինչ վերաբերում է գոնե **ինձ**, իմ «հանցանքներին» և «մեղքերին» – թեկուզ, այո՛, «ամեն ինչ ուռձացած» իմ հանցանքներին,– սակայն, ավաղ,– այդ իսկ պատճառով ոչ միայն ճշմարտությունը «պարզ» չի դարձել, այլ քողարկվել է ստի և գրպարտության ամենաթանձր քողով»¹⁴:

1936 թ. դեկտեմբերի 27-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն հաստատում է Պուշկինի մահվան 100-րդ տարելիցը նշող հորեյանական հանձնաժողովի նոր կազմ, քանի որ հանձնաժողովի նախկին անդամներից շատերը ենթարկվել էին բռնադատումների կամ հայտնվել անվստահելիների ցուցակում: Խանջյանի սպանությունից հետո Չարենցը մեկուսացվել է աշխատանքից, չի ընդգրկվել անգամ հանձնաժողովի կազմում:

1937 թ. փետրվարի 11-ին Կուլտուրայի տանը նշվում է Պուշկինի մահվան 100-րդ տարելիցը (սպանության օրը՝ 1837 թ. փետրվարի 10): Լույս են տեսնում Պուշկինի «Հողվածներ և նյութեր», «Հեքիաթներ, բանաստեղծություններ, արձակ էջեր» գրքերը, որոնցում թարգմանություններ ունի նաև Ն. Զարյանը: Նրա թարգմանությամբ առանձին գրքով տպագրվում է «Պոլտավա» պոեմը:

Չարենցը, որ վիթխարի գործունեություն էր ծավալել Պուշկինի մահվան տարելիցն արժանավորապես նշելու համար, ներկա չէր հանդիսությամբ: Իր կյանքի այս ծանր օրերին նա ոչ թե պրոլետգրողների կողմից մեծն Պուշկինի հորեյանը նշողների, այլ հենց ի՛ր՝ Պուշկինի հետ էր. թարգմանում էր նրա «Մարգարե» և «Բանտարկյալը» բանաստեղծությունները, որոնք, սակայն, ժամանակին մնացել են անտիպ: Պուշկինին խորությամբ բացահայտելու վկայություններից են այդ օրերին գրած բանաստեղծությունները, այդ թվում՝ «Օ, Ալեքսանդր, պոետ պայծառ...» տողով սկսվողը¹⁵, որը ևս մնացել է անտիպ, նաև անավարտ, և որի մեջ կան դեպի իր օրերի ողբերգությունը տանող խորքային արձագանքներ:

**Օ, Ալեքսանդր, պոետ պայծառ,–
Այսօր մահվանից քո մի դար անց
Վառվում ես, որպես չդադարած
Ոգևորության հրդեհ պայծառ...
Կանգնած ես, որպես արև, դարձյալ**

14 **Չարենց Ե.**, Գիրք մնացորդաց, էջ 242-243:

15 Այս գործը «Անտիպ և չհավաքված երկեր»-ում 16-րդ տողից հետո անհասկանալիորեն կիսվել և տպագրվել է որպես երկու առանձին բանաստեղծություն (տես էջ 219-220, նույնը առաջին կեսով տես **Չարենց Ե.**, Վերջին խոսք, էջ 227): Գ. Անանյանը իրավացիորեն այն մեջբերել է որպես մեկ ամբողջական գործ (տես «Չարենցյան ընթերցումներ», II, Եր., Երևանի համ. իրատ., 1974, էջ 80-81, նույնը՝ «Չարենցը և ռուս գրականությունը», Եր., Երևանի համ. իրատ., 1979, էջ 293-294, բնագիրը՝ ԳԱԹ, ՉՖ, 35-1):

Մեր ոգու անհաս զենիթում դու,-
Իբրև հանձարեղ մի լուսատու,
Որ չի լինելու երբեք անցյալ...
Քնարով և՛ բիրտ, և՛ նրբաձայն,
Ե՛վ թեթև, և՛ խոր, և՛ ծանրախոհ՝
Օրերում այս բորբ ու ոտնակոխ,
Ինչպես օրերում քո հղփացած
Պատերազմների ծխով, բոցով,-
Մարդկային օվկիանն ալեկոծող
Հողմերն են ահեղ շաշում դարձյալ...
Եվ մի՞թե այսօր, իրո՞ք որ ես
Քնարով իմ բորբ, ոգով, շնչով-
Ավելի եմ խորթ իմ մարտնչող
Օրերին, քան դու - նրանց, որ քեզ
Իբրև ամեհի թշնամիներ
Մահվան օղակով շրջապատած
(Որ կոչում էին դեռ «բարձր դաս»)-
Ոչ որպես մարդկանց շրջան մի նեղ,
Այլ ամբողջովին առած որպես
Խավ սոցիալական և միջավայր-
Ավելի էր քեզ արդյոք օտար,
Քան ժողովրդին իմ - այսօր ես,
Քան դու՝ հույզերով ու խոհերով-
-ին, ցարին, Բեկենդորֆին¹⁶ ...

1937 թ. փետրվարի 22-26-ը Մոսկվայում հրավիրվում է ԽՍՀՄ ԳՄ վարչության՝ Պուշկինի մահվան 100-րդ տարելիցին նվիրված լիագումար նիստը: Հայկական պատվիրակությունը ներկայացնում էին Գ. Հանես-օղլյանը (հանձնաժողովի նախագահ, ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահ) և Ն. Զարյանը, ով, ի շարս այլոց, հանդես է գալիս զեկուցմամբ՝ «Պուշկինը և հայկական պոեզիան»: Չարենցը ներկա չէր, թեև Մաքսիմ Գորկու առաջարկությամբ ընդգրկված էր նաև Պուշկինի մահվան 100-րդ տարելիցը նշող համամիութենական հորեյանական հանձնաժողովի կազմում:

16 ԳԱԹ, ՉՖ, 35-1:

3. Չարենցի ծննդյան 40-ամյակը, հայ գրողների ընդհանուր ժողովը և մահվան շուրջպարը

1937 թ. մարտի 13-ին լրանում է Չարենցի ծննդյան 40-ամյակը: Այդ առիթով ծնվում են խորհրդածություններ ու բանաստեղծություններ: Մարտի 7-ին Չարենցը վեհացնում է իրեն տրված աստվածային շնորհը, որ բացառիկ հանձարն է, և գրում «Իմ մուսային», «Քո՛ւյր իմ քարե» բանաստեղծությունները: Այնուհետև «Ինձ՝ քառասնամյա տարեդարձիս օրը – 28 մարտ 1937 թիվ» մուտքով գիշերը գրում է «Զվարթ գիտություն» բանաստեղծությունը (հարց է, թե ինչու է իր ծննդյան օրը համարում մարտի 28-ը, երբ հին տոմարով մարտի 1-ն էր, նորով՝ մարտի 13-ը): Հիշեցնում է, որ այդ օրը լրանում է նաև իր գրական գործունեության 25-ամյակը, և շարունակում. «...և այսպես, ահա ես – 25 տարի ստեղծագործական աշխատանքով հայրենի հերկը խոփով ոգեկան հերկելուց հետո՝ ահա տոնում եմ իմ կրկնակի հոբելյանը – մենա՛կ ու հալածական՝ պոետ աքսորյալ սեփական հայրենիքում՝ հերկի եզերքին հայրենական երգի՝ անայացած դաժանագույն եռանդով սեփական նախարարների և պետերի՝ հայրենի երգակիցների դեռ մնացած մի քանի խեղճերի հախուռն ցնծության ներքո»¹⁷:

1937 թ. ապրիլի 16-ին տեղի է ունենում գրողների միության ընդլայնված նիստը: Զեկուցում է Աբովը, Չարենցին հռչակում նացիոնալիստ, հակահեղափոխական, հանցագործ, մինչդեռ կուսակցությունը «նրա նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում», ըստ էության ասում, թե ինչու Չարենցը դեռևս ձերբակալված չէ: Չարենցին հռչակում են իր իսկ նվիրական գաղափարների թշնամի, և նա չի կարողանում ապացուցել լույսի պես պարզ այդ ճշմարտությունը: «Մի քանի վաստակավոր համբակներ և խառը այդ ժամանակներում ջրի երես թռած նորելուկ կարիերիստներ ասելով ատում էին Չարենցին: Ժողովների, գրական-գեղարվեստական հավաքույթների, գրավոր ու բանավոր վեճերի ժամանակ՝ բամբասանքի կարգով, բոլոր միջոցներով պախարակում, սևացնում էին նրան: Քաղաքական մեղադրանքներ էին բարդում գլխին: Ոչ նախանձն էր պակաս, ոչ էլ ծախու ճանապարհով առաջ գնալու տենդը: Հիշում եմ, Հայաստանի գրողների համագումարում, դեմքը դարձնելով Մոսկվայի ներկայացուցիչների խմբին (կարծեմ գրականագետ Կիրպոտինն էր), Չարենցը ամբիոնից բողոքում էր իր վիճակից: Ռուսերեն, ծայրահեղորեն բորբոքված, գոռաց. «Ինձ խեղդում են»... Այս ահավոր ճիչը մինչ այժմ էլ հնչում է ականջումս...»¹⁸: Ահա կատաղած, չարացած այս ոհմակը վրեժխնդիր է լինում անպաշտպան հանձարից:

17 Չարենց Ե., Անտիպ և չհավաքված երկեր, էջ 236:

18 Սարյան Մ., Չարենցի հետ: Հուշեր, Եր., «Նաիրի», 1997, էջ 409:

Եվ հուսահատության մատնված՝ Չարենցը խոսում է ինքն իր հետ. «Քանզի չկա տանջանք ավելի մեծ և պատիժ ավելի սև,– քան դատել մարդուն նրա սրբազան գաղափարի, նրա ողջ կյանքի միակ գործին դավաճան լինելու համար»¹⁹:

«Նոյեմբեր» խմբի մերկացումներով է հանդես գալիս Մկրտիչ Արմենը, Բակունցին բնորոշում որպես «կուստոռնավոր դաշնակցական», Չարենցի, Բակունցի կողքին հիշատակում Ներսես Ստեփանյանին, տրոցկիզմի մեջ մեղադրված Վաղարշակ Տեր-Վահանյանին, նրանց համարում «սրիկաների ոհմակ», ավելացնում նաև այլ անուններ, որպես չիրականացված չարիք հայտնում, որ անգամ Ալազանը և ոմանք ցանկացել են Չարենցի թեկնածությունն առաջադրել ԳՄ նախագահի պաշտոնում և նույնիսկ նրան տեղյակ են պահել կուսֆրակցիայի նիստերի բովանդակությանը...

Մահվան շուրջպարն սկսվել էր, և խոսքը տրվում է մոսկովյան պաշտոնական ներկայացուցիչ, հայ գրականությանը կցված գրականագետ և կուսակցական հանձնակատար **Վալերի Կիրպոտինին**. «...նա, ով կոնֆլիկտի մեջ է մտնում ժողովրդի հետ, ով անցնում է նրա թշնամիների ճամբարը, կանգնում է վտանգավոր ուղու վրա: Եվ ահա, այդպիսի վտանգավոր ուղու վրա է այժմ գտնվում Չարենցը, ինչի մասին պետք է ասել լիաձայն: <...>: Չարենցը, գովերգելով հեղափոխությունը, մինչև վերջ չձուլվեց նրան: Նա եղել է հեղափոխության կողմն անցած ինտելիգենտ ռադիկալ և ոչ թե լիովին պրոլետարիատի շարքերին ձուլված մարդ... **Ըստ Չարենցի՝ հեղափոխությունը կատարում է դիմագուրկ մասսան**» (ընդգծված արտահայտությունը Ամատունին վերագրում էր Չարենցին՝ նկատի ունենալով «Ամբոխները խելագարված» պոեմը):

Կիրպոտինը չէր հասկանում ազգային ժառանգության շարունակականության չարենցյան սկզբունքները և, նկատի ունենալով «Գիրք ճանապարհի»-ն, անպատկառ խոսքեր էր ասում նրա հասցեին: Նրա ելույթը բազմիցս ընդհատվում էր տեղերից հնչող ծախու գրամուկների «ձի՛շտ է» ձայնարկումներով:

Ելույթները շարունակվում են:

Քոչար. «...բայց արդյոք միայն այդ պոեմներն են, որոնք ուղղված են մեր ժողովրդի դեմ, մեր կոմունիստական ապագայի դեմ: Եթե կարդաք նրա այսպես կոչված ամենաամենա բանաստեղծությունները, դուք կտեսնեք նույն դաշնակցական բանբասանքը մեր ժողովրդի դեմ»²⁰:

Քոչարը նշում էր, թե իբր Չոպանյանը Խանջյանին ներշնչել է սահմանների վերանայման հարց, ինչը մաքսանենգորեն «իր գեղարվեստական թաքուն արտահայտությունն է գտել Չարենցի մեջ <...>: Այստեղ մենք տեսնում

19 **Չարենց Ե.**, Վերջին խոսք, էջ 235:
20 «Գրական թերթ», Եր., 1937, 1 մայիս, N 13, էջ 3:

ենք ռեակցիոն լեզու, ռեակցիոն ոճ: <...> Իր գրական և հասարակական գործունեությամբ վերջին տարիների ընթացքում Չարենցը մի քար էր՝ ընկած խորհրդային պոեզիայի ճանապարհին: Այսօր, ընկերներ, երբ մենք խոսում ենք սոցիալիստական ռեալիզմի մասին, անշուշտ, պետք է Չարենցի այս գրականությունը ջախջախվի և դեն շարտվի, որպեսզի իր ազդեցությունը չունենա երիտասարդ գրողների վրա: Մի քանի խոսք մեր երիտասարդների մասին: Ես, ընկերներ, ասացի, թե Չարենցը վերջին տարիներում մի քար է եղել՝ ընկած մեր խորհրդային պոեզիայի ճանապարհի վրա: Այա այդ ճանապարհով դեմ էին առնում նրանք և հնարավորություն էին ունենում առաջ գնալու»²¹: Այնուհետև անվանարկում է Խ. Դաշտենցին, ով հանդգնել էր «իր ոտանավորներից մեկը նվիրել Չարենցին, նրա աղջկան և Աբգար աղային»²² (նկատի ուներ Դաշտենցի «Բոց» (Եր., 1936) գրքում զետեղված «Եղիշե Չարենցին» բանաստեղծությունը):

Շարունակում է. «Կան մարդիկ, որոնք մտածում են, թե պատմությունը ապագայում նրանցից գոհ կլինի, որոնք բարյացակամ վերաբերմունք են ունեցել դեպի Չարենցը»²³: Այո՛, պատմությունն այսօր գոհ է նրանցից և գնահատում է նրանց գրական դիրքորոշումը:

Քոչարի հետ քոչարի է պարում **Ոսկերչյանը**, ըստ որի՝ Չարենցը «իր տեսական և քաղաքական ելույթներում եղել է հակահեղափոխական», «հանցանքներ է գործել ժողովրդի հանդեպ», «Չարենցի մոտ նկատվում է գազազած ատելություն դեպի այն ժողովուրդը, որը կառուցում է սոցիալիզմը»²⁴:

Ըստ **Հովիկ Մելիքյանի**՝ նացիոնալիզմն ու տրոցկիզմը Չարենցի ստեղծագործության մեջ հանդես են գալիս միասնաբար. «...իբր թե այդ ժողովուրդը ոռնում է, քաղցած է, մերկ է և այլն: Հայ ժողովրդին մարդկային կերպարանքից հանում և գազանային կերպարանք է տալիս... Ասացեք խնդրեմ Նարեկացու և Չարենցի մեջ ի՞նչ տարբերություն կա», «Ես այստեղ չեմ ուզում շատ օրինակներ բերել Չարենցից՝ դարձնելով նրան մեր ժողովրդի կենտրոնը»²⁵:

1937 թ. ապրիլի 17–21–ը տեղի է ունենում հայ գրողների ընդհանուր ժողովը²⁶: Նախորդ օրվա՝ ապրիլի 16–ի փորձարկումից հետո, իրենց ասածները կրկնելով ու լրացնելով, հանդես են գալիս կարմիր ջարդարարները: Հինգ օր շարունակ 40–ից ավելի պրոլետար գրողներ հոշոտում էին ոչ պրոլետար գրողներին. գրական բեմահարթակում երբևէ չեղած արյունոտ ողբերգություն էր: Շեքսպիրը սոսկ միամիտ ու իմաստախոս ողբերգակ է այն ամենի համեմատ, ինչ կատարվում էր գրական–մշակութային կյանքի

21 Սույն տեղում:

22 Սույն տեղում:

23 Սույն տեղում:

24 Սույն տեղում:

25 ՉԼԹ, Գրողների միության ֆոնդ, N 16-17:

26 Նյութերը տե՛ս «Գրական թերթ», 1937, 23 ապրիլ, N 12, 1 մայիս, N 13, նաև 12 հունիս, N 18:

բենահարթակում: Պահանջը Չարենցին խաչելն էր, նրա առաքյալներին ոչնչացնելը կամ հրապարակայնորեն լռեցնելը: Այդ իսկ պատճառով նա գրեթե ոչ մի պաշտպան չուներ...

Գեղարվեստի վարպետները, գեղեցիկից խոսելու փոխարեն, պետության պահանջով կա՛մ մեղադրում էին մեկմեկու, կա՛մ արդարանում ու պաշտպանվում մեկը մյուսից:

Չարենցը չէր մասնակցում, բայց տեղյակ էր անցուդարձին:

Առաջին օր՝ 17 ապրիլի: Նախագահություն՝ Բաշինջաղյան, Իսահակյան, Կիրպոտին, Դաբաղյան, Աբով, Գյուլիքնիսյան, Ջորյան:

Գրողների միության անելիքների մասին զեկուցում է **Աբովը:** Հիմքում Ստալինի մարտի 3-ի զեկուցման դրույթներն են. «Երկերեսանի նացիոնալիստ-տրոցկիստ թշնամիները՝ Բակունցը, Ալազանը և մյուսները, կարողացել էին իրենց շահատակությունների ասպարեզ դարձնել գրողների միությունը»²⁷:

Սիրասի ելույթից. «Մեր առաջնորդի զեկուցումը, նրա հանձարեղ ցուցմունքները [ցուցումները] մեզ համար ուղենիշ կհանդիսանան՝ աշխատանքները ավելի բարձր աստիճանի վրա դնելու համար»²⁸:

Երկրորդ օր՝ 18 ապրիլի: Առաջինը ելույթ է ունենում **Արագին**. «...յուրաքանչյուր գրական շեղում բերում է իր հետ նաև քաղաքական շեղում»²⁹:

Ելույթ են ունենում **Ղարազյոզյան, Հռ. Պողոսյան, Վեսպեր, Կորյուն, Վ. Գրիգորյան, Ռ. Ջարյան, Խ. Այվազյան, Զ. Եսայան:**

«Հայտնի է, որ Ռ. Ջարյանը մեկն է այն երիտասարդ քննադատներից, որոնք ոչ այնքան հեռու անցյալում խնկարկել են Բակունցի և Ալազանի նման հակահեղափոխականների գրական ստեղծագործություններին»³⁰: Ուստի քաջալերելի է, որ իր ելույթում նա ընդունում է իր թույլ տված սխալները:

Ծավալուն զեկուցմամբ հանդես է գալիս **Վ. Կիրպոտինը**՝ «Ստեղծագործական ոգևորությամբ դեպի նոր հաղթանակներ գրականության ֆրոնտում»³¹:

Չարենցի մասին կրկնում է նախորդ օրվա ելույթը. «...նա, ով կոնֆլիկտի մեջ է մտնում ժողովրդի հետ, ով գնում է նրա թշնամու բանակը – նա կանգնում է վտանգավոր ուղու վրա: Եվ ահա այդպիսի վտանգավոր ուղու վրա է գտնվում այժմ – այդ մասին պետք է ասել ամբողջ ձայնով – Չարենցը:

Ես ցանկանում եմ հիշել նրա՝ որպես գրողի էվոլյուցիայի մասին: Չարենցը՝ որպես պոետ, իր ստեղծագործությունն սկսեց հուսահատության երգերից: Նրա առաջին երգերը լի էին խավարով: Նա կապված չէր հեղափո-

27 «Գրական թերթ», 1937, 23 ապրիլ, N 12, էջ 3:

28 Նույն տեղում:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում:

31 Նույն տեղում:

խական շարժման հետ, դրությունը Հայաստանում ծանր էր, և նա ելք էր որոնում: Նրա առաջին երկերի մեջ հուսահատության նոտաներ, մահվան թախծի նոտաներ են հնչում: Երբ սկսվեց ինպերիալիստական պատերազմը՝ նա ընկավ նացիոնալիստների բանակը: <...>: Նա տեսավ կոտորած, միմյանց անողոք ոչնչացում, սարսափներ <...>: Չարենցը սարսափեց և հեռացավ, նա գնաց հեղափոխության կողմը <...> և ոչ թե միայն Չարենցի տաղանդն էր, այլ հենց նրա հեղափոխության կողմն անցնելն էր, որ ստեղծեց նրա ստեղծագործության հաջողությունը, փառք բերեց նրա համար: Միայն տաղանդը, միայն ձիրքը – դեռ ոչինչ չեն կարող անել <...>: Չարենցը գովաբանեց հեղափոխությունը, նրա հետ չձուլվեց ոչ մինչև վերջ: Նա ռադիկալ ինտելիգենտ էր, անցած հեղափոխության կողմը, և ոչ թե մի մարդ, որը լիովին ձուլվել էր պրոլետարիատի շարքերի մեջ: <...>: Նա հեղափոխությունը հասկանում է ոչ որպես օրինաչափ մի պրոցես՝ նախապատրաստված մարդկության նախորդ պատմության ընթացքով, ինչպես այն նկարագրել են Մարքսը, Էնգելսը, Լենինը, Ստալինը,– նա հեղափոխությունը նկարագրում է որպես արբեցում, որպես կրակե մրրիկ, որն այրում է հին աշխարհը: Հեղափոխության ստեղծագործական ուժերին նա մոտենում է որպես ռադիկալ ինտելիգենտ: Իսկ Չարենցի համար հեղափոխությունը կատարում է դիմագուրկ մասսան»³² (սա մնատունու վերագրումն է, որ իր գեկուցման մեջ կրկնում է Կիրպոտինը):

Կարծում էր, որ Չարենցն այն ժամանակ հիմնավորապես ժխտում էր «կուլտուրական ժառանգությունը», ինչը «երբեմն ընդունում էր ուղղակի անարխիզմի երանգ – հիշենք «Ռոմանս անսերը»:

<...>: Հետագայում Չարենցն ընկնում է հակահեղափոխական նացիոնալիստների ազդեցության տակ: Մենք անձամբ գիտենք նրա «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրա – դրանք էին Բակունցը, Խանջյանը և ուրիշներ: Նա ստեղծում է մի գիրք («Գիրք ճանապարհի»), որն ամբողջովին գրված է որպես հայ գրականության «ազգային հատկանիշների խտացման» թեորիայի իյուստրացիա: <...>: Չարենցը չի ցանկանում քննադատաբար վերանայել հինը՝ այսօրվան օգնելու համար, նա ցանկանում է, որ այսօրվա վրա կնիք դնեն մեռելները, նա ցանկանում է մեր այսօրվա գրականությունը վերածել որոշ չափով «թանգարանային գրականության», այնպիսի գրականության, որը ձայնակցում է անցյալի գերեզմաններին և ոչ թե ժողովրդական կյանքի կենդանի հորձանքին:

Եվ բնորոշ է, որ Չարենցի ստեղծագործության այս շրջանում ուղիներ չկան դեպի կենդանի ժողովրդական ստեղծագործությունը, որը Հայաստանում հորդում է անսպառ հորձանքով, որ ստեղծում է այնպիսի շեղւրներ, ինչպես «Հեքիաթը Լենինի մասին» (ակնարկում է Սարմենի «Լենին հսկան»,

32 Նույն տեղում:

1937, ինչպես նաև բազմաթիվ աշուղների անարվեստ հանգերգային կցունումները»³³:

Այսքանից հետո հայ գրականությունը գիտակցաբար գլխատող և մոլախտը գրականություն համարող գաղափարական դահիճ Կիրպոտինը հանգում է մահացու եզրակացության. «Չարենցի ձեռքից բռնեց թշնամին: Խորհրդային հասարակությունը <...> իր բոլոր օղակներում հիանալի համբերություն ու մեծահոգություն ցուցաբերեց դեպի Չարենցը, Չարենցը <...> պետք է ինքը հասկանա, որ նա դեռ կարող է դուրս գալ լուսավոր ուղի, կարող է միանալ իր ժողովրդին, և այն ժամանակ նրա ստեղծագործությունը կստանա նոր թռիչք, նոր խթան»³⁴:

Ըստ նրա՝ ժողովուրդը «ցանկանում է երգեր լսել Լենինի, Ստալինի մասին»: Ազգային հատկանիշների խտացումը բացատրում է որպես գաղափարական ընդդիմություն, ինչը չունի սոցիալիստական բովանդակություն. «Չարենցը կանգնել է նացիոնալիստական ուղու վրա»³⁵:

Կիրպոտինի այս ելույթը Չարենցի դատավճիռն էր՝ համաձայնեցված Ամատունու հետ:

Կիրպոտինը շարունակում է. «Միմոնյանը, Բակունցը, Ալազանը և ուրիշներ գրականության մեջ գործել են որպես վնասարարներ, որպես հակահեղափոխականներ, որպես տրոցկիստներ, դաշնակներ, որպես միջազգային կապիտալի գործակալներ, նրա՛ համար, որպեսզի հայ ժողովրդին շեղեին երջանիկ կյանքի ուղուց և վերադարձնեին անցյալում նրա ապրած բոլոր սարսափները: Նրանք <...> գրողներին հրահրում էին միմյանց դեմ, խեղդում էին այն բոլոր նախաձեռնությունները, որոնց նպատակն էր՝ հայ գրականությունը դուրս բերել համաշխարհային ճանապարհի վրա, նրանք խեղդում էին հայ գրականության տաղանդները»³⁶: «Տաղանդների» մեջ նաև անգրագետ աշուղներն էին, որոնք արժանանում էին նրա հովանավորությանը:

Կիրպոտինը դրվատում է Իսահակյանին, ով «բուրժուական նացիոնալիզմի բանակից» գալիս է դեպի մեզ: Իսահակյանը ներկա է եղել և լսել իր մասին ասվածը. կա նրա արձագանքը՝ ռեպլիկը:

Ընթերցվում է **Իսահակյանի** նամակը, որ նա գրել էր ելույթի փոխարեն, քանի որ հիվանդության պատճառով անձամբ ներկա չի եղել վերջին մի քանի նիստերին: Այն լույս է տեսել «Իմ ազատ և ստեղծագործ ժողովրդի հետ» վերնագրով. «Նրա (Կիրպոտինի – Դ. Գ.) խոսքը տոն տվեց ինձ գրելու այս երկտողը:

33 Նույն տեղում:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

եղել են տոլստոյական, նիցշեական, Գերմանիայում ուսանող ժամանակա՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված դարձել են անիշխանական, պեսիմիստ: Տարվել են Բուդդայով:

Ոգևորվել են հայկական մարտական ազգայնությամբ, դաշնակցական ոչ երկրորդական գործիչ՝ աշխատել են անձնվիրաբար, բանտեր են նստել, աքսորվել, փախել հայրենիքից:

<...>: Ինձ շատ մեծ վիշտ պատճառեց նաև մի քանի գրողների ձերբակալությունները, որոնց մեջ ունեի անձնական ընկերներ, բայց երբ վերադարձա Երևան և հնար եղածի չափ ծանոթացա իրերի և իրադարձությունների հետ, տեսա որ մեր կառավարությունը (որին անպայման վստահում ենք) և ժողովուրդը ուրիշ կերպ չէին կարող վարվել նրանց հետ:

Որովհետև նրանք շեղվել են ուղիղ, տրամաբանական ճանապարհից և ընթացել են մի դատապարտելի ճանապարհով, որ միայն վնաս է բերում մեր բազմաչարչար ժողովրդին»³⁷:

Այսինքն՝ իր մաշկը փրկված համարելով՝ Իսահակյանն արդարացում է բռնադատումները:

Երրորդ օր՝ 19 ապրիլի: Ելույթ է ունենում **Քոչարը**. «Խոսելով Չարենցի, Բակունցի և մյուսների «Նոյեմբեր» խմբակի մասին, ընկ. Քոչարը շեշտում է, որ այդ խմբակը տարել է նացիոնալիստական, սպեցիֆիկյան քաղաքականություն ոչ միայն հրապարակային ելույթներում, այլ նաև գեղարվեստական գրականության մեջ: Նա գտնում է, որ չնայած իր մի շարք հեղափոխական պոեմներին, այնուամենայնիվ, Չարենցը հետևողական հեղափոխական գրող չի եղել: Չարենցը ոչ մի լուսավոր էջ չի գտնում մեր ժողովրդի պատմության մեջ և այն պատկերացնում է «անդեկ, անգաղափար»: Ընկ. Քոչարը բերում է մի շարք փաստեր Չարենցի գրքից, որոնք ցույց են տալիս նրա նացիոնալիստական հանցանքները»³⁸: «Գիրք ճանապարհի»-ն տոգորված է նացիոնալիզմով:

Ս. Սողոմոնյանը քննադատում է Մ. Արմենի «Հեղնար աղբյուր»-ը:

Մ. Արմենը պաշտպանում է «Հեղնար աղբյուր»-ը՝ գտնելով, որ ինքը վրիպել է միայն «Երևան» վեպում:

«Պատմելով «Նոյեմբեր» կազմակերպության անդամների նացիոնալիստական, հակահեղափոխական արարքների մասին, Արմենն աշխատեց որոշ չափով նվազեցնել իր դերն այդ ասպարեզում»³⁹:

Գրողների ընդհանուր ժողովում **Մ. Արմենը** գրավոր հայտարարում է Չարենցի և Բակունցի գլխավորած «հակահեղափոխական խմբակի» գոյության մասին, որի անդամներից էր նաև ինքը:

37 Նույն տեղում:
38 Նույն տեղում:
39 Նույն տեղում:

«Ընկ. **Վահունին** իր ելույթում մի շարք օրինակներ է բերում այն մասին, թե ինչպես հակահեղափոխական Ալազաններն ու Բակունցները ստեղծում են հաճոյակատարության մթնոլորտ գրողների կազմակերպության մեջ»⁴⁰:

Գեմհրձյանը «...ասում է, որ ինքը խորհրդային գրողի զգոնություն չի ունեցել՝ նկատելու և հասկանալու, որ Բակունցի, Ալազանի, Չարենցի և մյուսների պայքարը տարվում է ազգայնական դիրքերից, և այդ է պատճառը, որ նա իր ժամանակին պաշտպանել է նրանց»⁴¹:

Վերստին ելույթ է ունենում **Կիրպոտինը**. «Չարենցը կանգնել է նացիոնալիստական ուղու վրա: Խորհրդային կառավարությունը ամենահամբերատար վերաբերմունք է ցուցաբերել նրա հանդեպ:

Սակայն Չարենցը դեռ համապատասխան եզրակացություն չի արել այդ բոլորից: Նա նույնիսկ չմասնակցեց ժողովին և լռություն պահպանեց: Այժմ միայն Չարենցից է կախված, թե արդյոք նա կվերադառնա դեպի խորհրդային գրականությունը՝ մինչև վերջ գիտակցելով իր հանցանքները»⁴²:

Չորրորդ օր՝ 20 ապրիլի: Ընդդեմ «տրոցկիստ և նացիոնալիստ» գրողների ելույթ են ունենում գյուղագիր **Ա. Շահնազարյանը**, **Տ. Հակոնյանը**, **Արաքսը...**

Տարոնցին խոսում է «իր ստեղծագործության մեջ թույլ տված մի շարք նացիոնալիստական սխալների մասին: Կանգ է առնում հակահեղափոխական նացիոնալիստ Ալազանի և Նորենցի հետ միասին «Գրական թերթում» վարած նացիոնալիստական քաղաքականության վրա»⁴³:

«Ընկ. **Ոսկերչյանը** խոսում է Ս. Տարոնցու և Մ. Արմենի սխալների մասին, գտնում է, որ նրանք մինչև վերջ էլ չխոստովանեցին իրենց սխալները: <...>: Արմենի նկարագրած Գյումրու արհեստավորության մեջ շերտավորում չկա, պայքար չկա:

Խոսելով Չարենցի մասին՝ ընկ. Ոսկերչյանը գտնում է, որ ընկ. Կիրպոտինը չափազանց ձիշտ կերպով տվեց Չարենցի գնահատականը: Չարենցը մեծ հանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ, նա մասնակից է եղել հակահեղափոխական նացիոնալիստների գործունեության, մեր կառավարությունը մեծահոգի գտնվեց նրա հանդեպ, նրան հնարավորություններ են տրված, որ ուղղի իրեն, այժմ մնում է, որ Չարենցը հիմնովին վերանայի իր գործունեությունը, եթե միայն ուզում է վերադառնալ դեպի խորհրդային գրականությունը»⁴⁴:

Ս. Հակոբյանը խոսում է Թերզիբաշյանի, Արմենի, Ստեփանյանի, Տեր-Սիմոնյանի դեմ: Այնուհետև. «Չարենցը դասագիրք էր կազմել, բայց

40 Նույն տեղում:

41 «Գրական թերթ», 1937, 1 մայիս, N 13:

42 Նույն տեղում:

43 Նույն տեղում:

44 Նույն տեղում:

այդ դասագրքից հանել էր ռուսական և եվրոպական գրողներին, մի խոսքով՝ օտար հեղինակների գրվածքները»⁴⁵: **Այդպես էր վարվել, որովհետև ինչպես ռուս և անդրկովկասյան ժողովուրդների, այնպես էլ արևմտաեվրոպական գրականությունը ներկայացվում էր առանձին դասագրքերով, իսկ այստեղ մեկնաբանվում է որպես նացիոնալիզմ:**

«Ընկ. **Ղազանյանը** նշում է, որ Չարենցի մոտ կա նաև բուխարինովշչինա, ինչպես Բուխարինը մի ժամանակ ռուս մեծ ժողովրդին համարում էր օբլոնովշչինա, ապա Չարենցը, Դր. Սիմոնյանը, Վանանդեցին աշխատում էին մեր լուսավոր անցյալի էջերը մթնեցնել: Նրանք ամբողջովին ուզում էին ժխտել մեր անցյալը»⁴⁶:

Հինգերորդ օր՝ 21 ապրիլի: Ելույթ են ունենում **Գ. Լևոնյանը** (Իսահակյանի մասին), **Հ. Մամիկոնյանը** (ՀԽԳՄ քննադատության բաժանմունքի աշխատանքների մասին), **Գ. Ղազարյանը** (Հայպետհրատի տնօրեն Չոփուրյանի դեմ), **Վշտունին** (կազմակերպական հարցերի մասին), **Հ. Մելիքյանը** (բռնադատված գրողների դեմ), **Ս. Զորյանը** (դրվատում է Իսահակյանին), **Հ. Գյուլիքևսյանը** (խոսում է իր թույլ տված սխալների մասին), **Աբովը** (եզրափակիչ մեղադրանքներ):

«Հայտնաբերվում» է «Հայաստանի հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական կենտրոն», գրողներից թիրախ են դառնում Զ. Եսայանը և Ե. Չուբարը:

Մայիսի 10-ին Չարենցը գրությամբ դիմում է ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Անատունուն՝ «Խորհրդային Հայաստան»-ում հողված տպագրելու թույլտվություն ստանալու համար՝ «...անկախ իմ հանդեպ ցույց տրվելիք քաղաքական-**այրակտիկ** վերաբերմունքից՝ այսինքն **անձնապես ինձ համար** իմ քաղաքական դրական կամ բացասական բնույթից **ինձ տրվելիք անձնական** հնարավորություններ[ից]: Վերնագիրը՝ «Մայիսյան հեղափոխության, իբրև դասակարգային շարժման, կատեգորիկ դասն ու ցուցմունքը հայ ամբողջ **ժողովրդին** (լենինյան առումով) – ժողովուրդների ազ–...»⁴⁷: Թուղթը (հավանաբար սևագրության) կեսից կտրված-պատռված է: Ենթադրաբար Չարենցը գրությունը չի ուղարկել, իսկ նման վերնագրով հողված թղթերի մեջ չի հայտնաբերվել:

1937 թ. մայիսի 20-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Անատունին ելույթ է ունենում Երևանի քաղաքային կոնֆերանսում. Խանջանը հերթական անգամ հռչակվում է ժողովրդի թշնամի, քննադատվում են նրա հետ աշխատած կուսակցական ու մշակութային գործիչները՝ որպես նրա հովանավորյալներ. «Ընկերներ, ես ուզում եմ, որ Դուք ինձ ձիշտ հասկանաք և այն տպավորու-

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում:

47 ԳԱԹ, Չարենցի ֆոնդ, N 164:

թյունը չունենաք, թե շաբաթը մեկ Հայաստանում մենք պետք է բացահայտենք նացիոնալիստական որևէ կենտրոն...»⁴⁸: Բայց այդպե՛ս էր. Ամատունին գործում էր Բերիայի բացահայտ թելադրանքով և շրջապատված էր նրա դրածոներով: Բերիան վերջապես ազատվել էր Խանջյանից, նաև պահել ու պաշտպանել գիտեր յուրայիններին և Հայաստանի հանդեպ ունեցած վրացական խորքային մեծագարությանը կարող էր քանդել հանրապետությունը: Վրաց քաղաքական կինտոների ժամանակն էր: Սա էր հեղափոխության նվերը համայն Ռուսիային և Հայաստանին:

4. Ամատունու ճառը ՀԿ(Բ)Կ 10-րդ համագումարում և Չարենցի նամակը

Մայիսի 26-ին բացվում է ՀԿ(Բ)Կ 10-րդ համագումարը և տևում մինչև հունիսի 2-ը: Ճառով հանդես է գալիս ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին: Առանձին բաժնով ներկայացված են «Գրականության և արվեստի հարցերը»: Ամատունին իր ճառում խստորեն քննադատում է Չարենցին, Բակունցին, նրանց համախոհ արդեն իսկ ձերբակալված գրողներին և «Նոյեմբեր» միության գործունեությունը: Նա նշում է՝ Խանջյանի հանձնարարությամբ «դաշնակ» Բակունցը առաջարկում է ֆիլմ նկարահանել և ցուցադրել «դաշնակ ավանտյուրիստների հարձակումը Օտտոմանյան բանկի վրա, պահանջում էին կինոնկար պատրաստել հակահեղափոխական դաշնակ-խմբապետ Անդրանիկի մասին»⁴⁹:

Նա Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան ներկայացնում է որպես Ռուսաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի մասնաձյուղ, իսկ «Նոյեմբեր»-ը՝ սպեցիֆիկյան ուղղվածության ազգայնական կազմակերպություն, որ ստեղծվել էր 1925 թ. Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի նացիոնալ-ուկլոնիստական-սպեցիֆիկյան ղեկավարության աջակցությամբ (ակնարկում է Ա. Մյասնիկյանին և Ա. Հովհաննիսյանին), սնվում էր սպեցիֆիկների հակահեղափոխական թեորիայով, ժխտում էր Հայաստանում պրոլետարական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունն ու հնարավորությունը, հայկական խորհրդային գրականությունը հակադրում էր ռուսական խորհրդային գրականությանը: Հենց այդ խմբակի ձայնափողն էր գրող Մ. Արմենը, որը ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի՝ 1932 թ. ապրիլի 23-ի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումից հետո հանդես եկավ «ազգային հատկանիշների խտացման» վերաբերյալ «տեսությանը», որը, ըստ էության, մարտնչող նացիոնալիզմի պրոպագանդ էր:

48 Նույն տեղում:

49 «Գրական թերթ», 1937, 12 հունիս, N 12:

Մկրտիչ Արմենը նկատեց, որ մեր նվաճումների ազդեցության տակ իր դիրքերի հակահեղափոխականությունը խոստովանեց գրող Եղիշե Չարենցը: Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին ուղղած իր նամակում Չարենցը հայտարարում էր. «Ես նույնիսկ չեմ կասկածում, որ, իրոք, իմ սխալներն ունեն նացիոնալիստական, հետևաբար և (սոսկում եմ ասել) հակահեղափոխական, ուրեմն և հակախորհրդային էություն»⁵⁰:

Այս խոստումները և իր սխալների ու վարմունքի քննադատությունը Չարենցին պարտավորեցնում են մինչև վերջ գիտակցել իր հանցանքը խորհրդային գրականության հանդեպ և գործնականում նոր ստեղծագործական արտադրանքով ապացուցել, որ ինքն իսկապես դառնում է լիարժեք խորհրդային գրող. «Ժամանակն է, վերջապես, որ Չարենցը լրիվ հաշիվ տա իրեն իր ամբողջ ուղու մասին և դադարեցնի թե՛ իր և թե՛ գրականության հանդեպ երկերեսանիություն անելը: Նա պետք է հասկանա, որ ամենից առաջ հարկավոր է անկեղծություն»⁵¹:

Չարենցը արյան հեղեղների այս խելագար շուրջպարի մեջ էր հայտնվել:

Համագումարում ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի՝ իր դեմ ուղղված խիստ քննադատական ելույթից հետո՝ մայիսի 30-ին, Չարենցը բաց նամակով դիմում է Ամատունուն՝ ապացուցելու, որ ինքն անմեղ է ու արդար: Իր խոսքը բնորոշում է որպես «քաղաքական անվերապահ հաշվետվություն՝ <...> [իր] քաղաքական-գրական սխալներն ու սայթաքումները գիտակցելու միջոցով գտնելու հետագա խորհրդային գրական-հասարակական կյանքին ու աշխատանքներին կապվելու ուղիներ ու հնարավորություններ»⁵²:

Այդպիսի մի բաց նամակ էլ նա Կենտկոմ էր ուղարկել մայիսի 26-ից առաջ, որը Ամատունին հիշատակում է և որից մեջբերում է անում իր ճանուն: Չարենցը բաց նամակով Կենտկոմ դիմել է և՛ համագումարից առաջ (առաջին հայտարարություն), և՛ հետո: Մայիսի 30-ի գրություններից մեկի սկիզբը՝ «Ի հավելումն Ձեզ ուղղած իմ առաջին հայտարարության <...>: Մի քանի օր առաջ Ձեզ ուղղած իմ հայտարարության կոնկրետացման և պարզաբանման կարգով՝ խնդրում եմ թույլ տալ հայտնել Ձեզ հետևյալը»⁵³:

Քաղաքական այս դաժան պայքարում, չունենալով ոչ մի աջակից, Չարենցը փորձում էր պաշտպանվել, իմանալով ձշմարտությունը՝ միաժամանակ ընդունել իրեն վերապահված պաշտոնական տեսակետը և դրանով իսկ իբր թե կոտրել հարվածի պիքը. «ԱՄԵՆԱԷԱԿԱՆԸ: Իմ գրական-քաղաքական ողջ կոնցեպցիայի վերագնահատության սկզբունքային խորության, քաղաքական

50 Նույն տեղում:

51 Նույն տեղում:

52 Չարենց Ե., Նորահայտ էջեր, էջ 559-560:

53 Նույն տեղում:

կոնկրետ բովանդակության և որակային կշռի մասին թերևս կարելի լինի պատկերացում տալ հետևյալ ձևակերպումով.–

Ընկ. Կիրպոտինի ելույթում իմ քաղաքական և գրական սխալների և մեղքերի մասին տրված գնահատականը՝ **իր քաղաքական կոնկրետ բովանդակությամբ և վերաբերմունքային ամբողջ առումով**,– ներկայումս ես գտնում եմ ոչ միայն ճիշտ և քաղաքականապես անվիճելի,– այլև առավել, քան կարելի է պատկերացնել քաղաքական ներկա սիտուացիայում,– աննեղելի չափով մեղմացած, **ԱՅԼ ԳԵՊՔՈՒՄ լիբերալ վերաբերմունքի սահմանակցելու չափ բարեհոգի վերաբերմունք**։ «Հիմնական սայթաքման քար» է համարում «հասարակական մարդու կատարած յուրաքանչյուր ակտի **սեփական պատկերացման և օբյեկտիվ նշանակության միջև տարբերություն չտեսնելը**»⁵⁴։

Առողջական վիճակի և դրանով պայմանավորված աշխատանքային սահմանափակ հնարավորությունների պատճառաբանությամբ Չարենցը հուշում է, որ իր շարադրանքից պետք չէ սպասել առարկայական հետևողականություն և կատարելություն։ Սա ևս գիտակցված նահանջ է, այլ կերպ՝ գրի դիվանագիտություն՝ ներկայացնելու իր «Մեղայական խարտիան»։

Չարենցն ստիպված է լինում սահմանազատել իրեն Խանջանից, ձերբակալված գրողներ Բակունցից, Տեր–Սիմոնյանից, Վանանդեցուց, Նորենցից, Թոթովենցից, որոնց հետ 1935 թ. ՀԳՄ–ից վտարվելուց հետո իրականում հարաբերություններ չունեին։ Գուցե միայն Բակունցի, Մահարու մորմոքն էր հոգու մեջ...

Բանտերում գրողներին հարցաքննում էին և ցուցմունքներ կորզում միմյանց, նաև Չարենցի դեմ, ով ահա այսպիսի գրություններով փորձում էր պաշտպանվել, իսկ խորքային դատողություններով՝ ակնարկել, որ այս ողբերգությունը մտածող անհատի, ստեղծագործող անհատականության և գաղափարական որոշակի կաղապարներով գործող պետական ջարդարար մեքենայի բախումն է։ Չարենցն ընկրկում է, բայց և իր մասին խոսում որպես «իր խորհրդային բովանդակ երկրի ու ժողովրդի **մեծագույն և ամենաժողովրդական պոետի բարձր կոչումին ու բախտին**»⁵⁵ արժանացած հեղինակության։

Այս ծավալուն նամակը Չարենցը գրել է մի քանի տարբերակով, նյութի վերաբերյալ գրառումներ արել թղթի առանձին պատառիկների վրա, փորձել իրական Չարենցին դիմակ հագցնել, շարժվել ժամանակի պահանջներին համապատասխան, իրեն դնել գիտակցական մոլորության մեջ՝ փորձելով դիմացիին համոզել, որ ինքն էլ է այն կարծիքի, թե հեղափոխությունը շարունակվում է։ Այս հոգեբանական մթնոլորտում Չարենցն ականա և ստիպ-

54 Նույն տեղում։

55 Նույն տեղում։

մամբ իրեն մեղավոր է ճանաչում, այստեղից էլ՝ «սեփական քաղաքական հանցագործության գիտակցումը», «ժողովրդի հանդեպ կատարած հանցանքի պատկերացումը», «հանցապարտությունը», «մեղսագործության էական կերպարանքը»:

Ընկրկումը, ընկճվածությունը երբեմն տեղի էին տալիս, և Չարենցն ուղիղ ասում էր. «Ընկեր Ամատունի,- և, ընդհանրապես,- ընկ. Կենտկոմ.- Ես իմ գրական-հասարակական ողջ էությանը,- վերջապես իբրև հասարակ մարդ և հասարակ, շարքային քաղաքացի - **չեմ կարող լինել, եթե ուզենամ անգամ, իմ խորհրդային երկրի ու ժողովրդի դեմ....**»⁵⁶:

Անել, ջղածիգ վիճակում նա չէր գտնում ելքը:

Ամատունուն հղած այս նյութերի առնչությամբ Չարենցը տեսակցություն է խնդրել նրա հետ, որպեսզի տար ավելի մանրամասն բացատրություն: Տեսակցությունը չի կայացել: Եղել է սառը հեռախոսագրույց: Իսկ Կենտկոմ՝ Ամատունուն հասցեագրված նյութերը քննարկման են ուղարկվել գրողների միություն՝ Արովին, ինչն ամենևին Չարենցի սրտով չէր, որովհետև գրել էր «**միմիայն** Կենտկոմի համար»: Իսկ Կենտկոմ ասածը Ամատունին էր⁵⁷:

Գրություններից մեկում Չարենցն իր և յուրայինների վիճակը տեսնում էր ամբողջ երկրի համապատկերով. «Ոչ միայն իմ հանդեպ հարուցված մեղադրանքի, այլև վերջին ողջ շրջադարձի քաղաքական իսկական իմաստն ու նշանակությունը ինձ համար պարզվեց չափազանց դանդաղ, օր օրի - գերազանցապես շրջադարձի սկզբից մինչև օրս, և՛ առավելագույն չափով Խորհրդային ողջ Միության մեջ տեղի ունեցող, հետզհետե բացվող դեպքերի և փաստերի անդրդվելի տրամաբանության հարվածների ներքո»⁵⁸:

5. Չարենցը Ծաղկածորում, ընտանիքի հոգսը և ձերբակալությունը

1937 թ. հուլիսի 24-ին Չարենցը մեկնում է Ծաղկածոր՝ զբաղվելու կացարանից վտարված ընտանիքի հարցով: Զայրալից խոսքեր է ասում Ալի Մամեդով Սաֆար Հուսեինզադեի հասցեին, որին տվել էին իր ընտանիքին հատկացված սենյակը: Վերջինս եղել է Կենտկոմի անդամ, 1937-1941 թթ.՝ ՀՀ արդարադատության ժողկոմ: Հնարավոր է, որ խոսքը Սաֆար Ալմամեդովի մասին է, ով եղել է Կենտկոմի օրգանի՝ Երևանում լույս տեսնող աղբբեջաներեն «Կոմունիստ» (1937-1939) թերթի խմբագիրը: Չարենցի ընտանիքը հանգստանում էր Գրողների տան երկրորդ հարկի մի սենյակում: ԳՄ վարչությունից եկել ու ասել էին՝ անմիջապես ազատեն սենյակը: Պատճառաբա-

56 Նույն տեղում, էջ 560:

57 Տե՛ս ԳԱԹ, 23, 164, 165, նաև: 85:

58 **Չարենց Ե.**, Վերջին խոսք, էջ 117:

նությունը՝ «Մեկ ամիս ապրել եք, ժամկետն անցել է, հիմա էլ ուրիշները պիտի ապրեն»⁵⁹:

Չարենցը վրդովված խոսում էր Ծաղկաձորի գրողների տնից ընտանիքին վտարելու մասին: Կատարվածից իրեն կորցրած՝ պատահական մի մեքենայով Երևանից մեկնում է Ծաղկաձոր՝ Գրողների տան կացարանից վտարված ընտանիքին փոխադրելու համար: Ծաղկաձորում վարձում է կառք, ըստ կնոջ՝ սայլ, կնոջն ու երեխաներին տեղավորում, գտնում դուդուկ նվագողներ, որոնք տխուր մեղեդիներով ուղեկցում էին բանաստեղծի երթը: Հայոց բանաստեղծը հետաքրքրասեր ժողովրդի աչքի առաջ անցնում էր իր Գողգոթայի ճանապարհը: Այդպես դուրս են գալիս Ծաղկաձորից, որից հետո մեքենա են նստում ու հասնում Երևան:

Ճանապարհին Չարենցը գայրալից խոսքեր է նետում իր ընտանիքն այդ վիճակին հասցնողների հասցեին: Նրա արարքը գնահատվում է որպես խուլիգանություն և վիրավորանք՝ հասցված ՀԿ(Բ)Կ, ՀամԿ(Բ)Կ և ամբողջ ԽՍՀՄ ղեկավարությանը, քանի որ ազգությամբ ադրբեջանցի պաշտոնյան, որին հատկացրել էին Չարենցի ընտանիքին տրված սենյակը, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ էր:

Սողոմոն Տարոնցին նկարագրում է իրավիճակը. Չարենցի ընտանիքին հատկացված «բնակարանը նրանից վերցվել է գրողների ղեկավարության համաձայնությամբ և տրվել «Կոմունիստ» ռուսերեն թերթի խմբագիր Ռիզակին»⁶⁰: Հուշագրում ավելացվում է, որ գրողների այն ժամանակվա «գլուխները» Գևորգ Աբովն ու Հմայակ Սիրասն էին, գրական ֆոնդի տնօրենը՝ ոմն Հարություն Շալջյան, որոնք կիրակի օրով Երևանից գնացել էին Ծաղկաձոր՝ այցելելու իրենց ընտանիքներին: Հանգստյան տան առջև կանգնել է մի կառք՝ մեջը Չարենցը, մի քանի նվագածուներ և բանաստեղծի կարսեցի մի ընկերը: Չարենցն ասել է. «Մի ապաշնորհ Աբով ու Սիրաս խլել են իր ձեռքից բնակարանը և տվել մի թուրքի»: Չարենցի գայրույթից ահաբեկված՝ Աբովն ու Սիրասը թաքնվել են ճաշարանում: Մխալ է նաև այն լուրը, թե իբր Չարենցն ընտանիքին տեղավորել է «Ախտայի ջրաղացներ» կոչված թաղամասում վարձակալած տանը, քանի որ այդտեղ ընդամենը գիշերել են, հաջորդ օրը՝ վերադարձել Երևան: Սիրասն իր հուշերում այս դրվագին առնչվող իրադարձությունները միտումնավոր կեղծել է:

Ներկայացնենք բանաստեղծի դուստր Արփիկի՝ այդ տարիների մանկական տպավորություններից մի դրվագ. Չարենցը աշխատասենյակում

59 **Չարենց Ի.**, Ե. Չարենցի կյանքի վերջին օրերը, «Չարենցի հետ: Հուշեր», էջ 375:

60 Նույն տեղում: Մխալ է ներկայացված. խոսքը ոչ թե «Կոմունիստ» ռուսերեն թերթի խմբագիր մասին է, այլ համանուն (1940 թվականից «Սովետ Էրմանիստանի») ադրբեջաներեն թերթի խմբագիր Սաֆար Ալմամեդովի:

եղած շարժական սեղանի տատանվող ոտքի տակ դրել է Աբովի գիրքը՝ մեջը դանակ: Եղավ Աբովի գիրքը՝ «Դանակը բկին»:

Ծաղկաձորից վերադառնալուց հետո՝ հուլիսի 25-ին, Երևանի սաստիկ շոգերի պատճառով Չարենցն ընտանիքը տեղափոխում է Նորք, վարձակալում երկհարկանի մի մեծ տան վերին հարկը: Ըստ հիշողների՝ տանտիրոջ անունը Սիմոն Սարգսյան էր, տանտիրուհունը՝ Արփիկ, տղաներից մեկինը՝ Արտավազդ: Տանտերը՝ հողագործ մի մարդ, իրիկվա ժամերին տան դռանը նստել ու «Որսկան ախպեր» է երգել, որի տխուր մեղեդին ասես բանաստեղծի սրտից էր մխում:

Հուլիսի 26-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ մարմինները Չարենցի գործով որոշում են կայացնում. այն է՝ ըստ ՀԽՍՀ ՔՕ 67-րդ և 68-րդ հոդվածներով առաջադրվող մեղադրանքների՝ «Նախկինում ընտրված խափանման միջոցը՝ չբացակայելու մասին ստորագրություն վերցնելը, փոխել բանտարկության՝ կալանավորելով ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի ներքին բանտում»⁶¹: Այն ստորագրել են մի շարք պաշտոնատար անձինք՝ 4-րդ բաժնի օպերլիազոր, պետանվտանգության կրտսեր լեյտենանտ Անդրանիկ Ինայեկյան, Ռուբեն Հարոյան՝ «Միանում են», Կոստիկյան՝ «Համաձայն են», Մուղղուսի՝ «Հաստատում են», ՀԽՍՀ դատախազի տեղակալ Ս. Միքայելյան՝ «Համաձայն են», Ինայեկյան՝ «Ճիշտ է»: **Ատելության ու թշնամանքի այս վանդակաձաղից բանաստեղծն այլևս դուրս չէր գալու:**

Կոմիսար Մուղղուսու ստորագրությամբ լրացվում է 6/29 օրդերը՝ աշխատակիցներ Արամ Հարոյանի և Անդրանիկ Ինայեկյանի միջոցով Չարենցին ձերբակալելու և նրա բնակարանը խուզարկելու մասին: 1937 թ. հուլիսի 27-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ 4-րդ բաժնի կողմից Չարենցը կալանավորվում է: Նրան մեղադրանք է առաջադրվում՝ ըստ ՀԽՍՀ ՔՕ 67-րդ, 68-րդ և 78-րդ հոդվածների, նշվում է նաև, որ նա շարունակում է «ակտիվ պայքար մղել ընդդեմ խորհրդային իշխանության»:

Չարենցին կալանավորում են Նորքում, որտեղ առանձնացել էր ընտանիքի հետ: Նրա խնդրանքով ընտանիքը ևս իր հետ Նորքից տեղափոխվում է իրենց բնակարան: ՆԳԺԿ նշված աշխատակիցները խուզարկում են Չարենցի աշխատասենյակը, խնդրում իրենց գրքեր նվիրել: Չարենցը մակագրությամբ նվիրում է: Դուրս գալուց առաջ ցանկանում է համբուրել երեխաներին, հրաժեշտ տալ, բայց կինն ասում է՝ պետք չէ հրաժեշտ տալ, կվերադառնա, նոր կհամբուրի: Կնոջն է տալիս ձեռքի ոսկե ժամացույցը՝ ասելով, որ կարող է պետք գալ նրան, մի քանի րոպե ակնդետ նայում նրա աչքերին և հսկիչների ուղեկցությամբ դուրս գալիս: Պատշգամբից տեսնելով,

61 Չարենցի դատական գործն ամբողջությամբ տես **Չարենց Ե.**, Նորահայտ էջեր, էջ 343-375, 589-618:

թե ինչպես են Չարենցին նստեցնում մեքենա ու տանում՝ կինը նոր է հասկանում, որ նա գնում է անվերադարձ:

Կալանավորվում է ՆԳԺԿ ներքին բանտում: Բանտի աշխատակցի ձեռքով լրացվում է «Ձերբակալվածի անկետա»՝ հաստատված Չարենցի ստորագրությամբ:

Այս օրերի, ժամերի ու իրադարձությունների մասին պահպանվել է Չարենցի կնոջ՝ **Իզաբելա Նիսայան-Կողարաշյանի** հուշը. «Երևանը շոգ էր էլի: Նա ասաց. «Արի Նորք տանեմ քեզ»: Հետո ինձ վերցրեց երեխեքի հետ տարավ Նորք: Նորքում, էստեղ երկու հարկանի մեծ տուն էր, չեմ իմանում՝ ո՞ւմն էր, չեմ հիշում հիմա: Առավոտյան էր, թեյ խմեցինք, պրծանք: Նա մի երեխային վերցրեց գիրկը, էն մյուսի ձեռքից բռնեց, գնաց ջրի ավիլ: Ես էլ տունը հավաքում էի: Մեքենա եկավ <...>: Տեսա երկու ՆԳԺԿ-ի մարդիկ են՝ հագնված, համազգեստով (հիշյալ Արամ Հարոյանը և Անդրանիկ Ինայեկյանը – Դ. Գ.): Եկան ասացին. «Որտե՞ղ է Չարենցը»: Ասացի. «Հստեղ է, երեխեքի հետ էստեղ կանգնած է»: Նրանք շուռ եկան գնացին դեպի նա: Եվ նա խնդրեց. «Իմանում եմ, որ ես էլ էստեղ չեմ վերադառնա, խնդրում եմ իմ ընտանիքին էլ հետներդ տանեք Երևան»: Եվ նրանք, իհարկե, չմերժեցին:

Ճանապարհին <...> մեծ երեխան Չարենցի գրկին էր: Ինքը՝ շատ տխուր, գլուխը քարշ... Ամբողջ ճանապարհը մինչև Երևան էսպես եկանք: Մի խոսք նա չխոսեց ճանապարհին: Հետո, որ եկանք Երևան, թիկնոցը հանեց, նստեց: Էս տղերքն էլ մտան նրա աշխատասենյակը: Նրանք ասացին. «Ընկե՛ր Չարենց, Ձեզ կանչել են ՆԳԺԿ: Դուք պիտի գաք Ձեր գործով, բայց խնդրում ենք մի երկու գիրք մեզ նվեր տաք»: Նա ասաց. «Խնդրեմ»: Հետո նա վերցրեց երկու գիրք, ստորագրեց, տվեց ամեն մեկին մեկը: Հետո թիկնոցը չհագավ: Ասաց. «Շոգ է»: Հենց մի հատ շապիկով, կեպկայով...

Նա ասաց. «Իզաբելա՛, որտե՞ղ են երեխեքը, ես ուզում եմ երեխեքին համբուրել»: Ասացի. «Ձե՛, մի՛ համբուրիր, դու պիտի վերադառնաս... պետք չէ հրաժեշտ տալ»: Նա ասաց. «Լա՛վ, որ դու կարծում ես, թե հրաժեշտ տալը վատ նշան է, որ ես չեմ վերադառնա, ապա ես երեխեքին հրաժեշտ չեմ տա: Բայց նայնպես իմ ժամացույցը վերցրու, կարող է քեզ պետք գալ»: Շատ գեղեցիկ, լայն շղթայով ոսկե ժամացույցը նա հանեց ձեռքից և ինձ տվեց: Էսպես աչքերիս նայեց մի հինգ րոպե, մի չորս րոպե, նայեց տխուր, հետո ասաց. «Լավ, Իզաբելա, ես գնացի»: Էսպես նա առաջ ընկավ, ետևից էս երկու տղերքը... Ես պատշգամբ դուրս եկա՝ տեսա, որ նա մեքենա նստեց, ես այդ ժամանակ զգացի, որ Չարենցը գնում է անվերադարձ»⁶²:

Ժամանակակցի (**Հարություն Մկրտչյան**) վկայություն. «Ծաղկաձորում գրողների միությանը պատկանող մի մեծ փայտաշեն շենքից բացի,

62 Չարենց Ի., նշվ. աշխ., էջ 376-377:

կար նաև երկու սենյականոց քարաշեն մի տնակ, որը ամռանը զբաղեցրել էր Եղիշե Չարենցի ընտանիքը: Բանաստեղծը, որ նյութապես լավ վիճակում չէր, ուղեգրերի արժեքը դեռ չէր վճարել: Գևորգ Աբովը (ԳՄ առաջին քարտուղար – Դ. Գ.) կարգադրում է պոետի ընտանիքը հանել այդ տնակից, և տնակը տրամադրել աղբբեշանական թերթի խմբագրին: Փողոցում մնացած տիկին Ջապելն իր երեխաներով իսկույն հավարը գցում է ամուսնուն: Եղիշե Չարենցը Աբովին չի գտնում և, «բարի հիշելով» նրա մեռելն ու կենդանին, մեկնում է Ծաղկաձոր: Ընտանիքը գտնում է պատի տակ ծվարած: Ընտանիքը նստում է իր հետ եկած կառքը, հրամայում է դանդաղ քշել, հանում է գլխարկը և Ծաղկաձորում ու Ախտայում անցնող-դարձողին խնդրում է.

- Եղիշե Չարենցն եմ, ողորմություն արեք...

Չարենցի այդ արարքը համարվեց «քաղաքական» խուլիգանություն:

Հարցը դրվեց միության վարչության նիստում, Եղիշե Չարենցը հեռացվեց գրողների միությունից «քաղաքական խուլիգանության» համար: (Միջանկյալ հավելենք, որ 1935 թ. մարտի 13-ին գրողների միության շարքերից հեռացվելուց հետո՝ նույն տարվա հունիսին, վերականգնվել էր, իսկ տվյալ պահին հեռացվում էր անվերադարձ – Դ. Գ.): Միայն Ստեփան Զորյանն էր դեմ քվեարկել, թեև «չունեք» բանաստեղծի հետ: <...>: Հենց մյուս օրը, հապշտապ, Գևորգ Աբովի գլխավորությամբ մի «պատվիրակություն» է գնում Կենտկոմի քարտուղար Ամատունու մոտ՝ Գևորգ Աբով, Հովիկ Մելիքյան, Հնայակ Սիրաս, Նորայր Դաբադյան, և պահանջում, որ ձերբակալվի «քաղաքական խուլիգանը»: Ամատունին սկզբում վախենում է՝ ասելով.

- Եղիշե Չարենցն է, ժողովրդի սիրելին, ապստամբություն կարող է լինի:

Ու չի համաձայնում:

Սրանք գնում են նաև մյուս օրը: Ամատունին կարգադրում է ձերբակալել հիվանդ, անկողնում պառկած պոետին: Եվ սև մեքենան գիշերով անկողնուց հանում և բանտ է տանում պոետին՝ տանելով նրա ու Վահան Տերյանի արխիվը: <...>: Այդպես էլ կորավ նաև Վ. Տերյանի բավական մեծ արխիվը և պոետի ձեռագրերը, որոնց մեջ նաև բավական սովոր մի աշխատություն մեր պոեզիայի պոետիկայի մասին՝ սկսած Գրիգոր Նարեկացուց մինչև Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը, Վահան Տերյանը ու ինքը՝ Եղիշե Չարենցը: Իր իսկ պոետիկայի մասին գրածը նրա թույլտվությամբ արտագրել եմ ես և հրապարակված է 10-րդ դասարանի աշակերտության համար գրած «Սովետահայ գրականության պատմություն» դասագրքում»⁶³:

63 Սկրտչյան Հ., Ակսել Բակունց, Եղիշե Չարենց և ուրիշներ, «Գրական թերթ», 1989, 17 մարտ, N 12:

Այլ վկայություն՝ **Հայկ Ֆադեյի Դռնոյան**. «Պետհրատի գործով Կենտկոմի քարտուղար Ամատունու մոտ էի: Կատաղած ներս մտավ Հովիկ Մելիքյանը և ասաց. «Մինչև ե՞րբ պետք է հանդուրժենք այդ խուլիզանին: Ինչո՞ւ չեք կարգադրում դրան կալանավորել»: Ամատունին թողեց ինձ, մի պահ մտածեց, ապա զանգահարեց Մուղղուսուն և կարգադրեց Չարենցին կալանավորել: Միաժամանակ Ամատունին ասաց՝ թող պատմությունը ինձ դատապարտի»⁶⁴:

Բայց ներքին քաղաքական զարգացումները կտրուկ փոփոխությունների են ենթարկվում, այլ կերպ՝ քաղաքական բուրգը գլխիվայր շուտ է գալիս: Մեպտեմբերի 14-ին ձերբակալվում է ներքին գործերի ժողկոմ Խորեն Մուղղուսին (Աստվածատուրով, 1898, քաղաք Նախիջևան – 1938, 8 փետրվարի, Մոսկվա): Լինելով ՀԿ(Բ)Կ Կենտկոմի լիազուրկար նիստի մասնակից՝ ձերբակալվել է նախօրյակին հենց նիստերի դահլիճում՝ ըստ Ստալին-Բերիա ցուցումի: Ըստ պաշտոնական կարծիքի՝ կորցրել էր պետական ծառայողի վստահությունը: Նրա կարգադրությամբ 1937 թ. օգոստոսին Սահակ Տեր-Գաբրիելյանից ցուցումնք կորզելու նպատակով Եղբայր Նիկողոսյանն ու Իվան Գևորգովը, ծեծի ենթարկելով, սպանել էին նրան և հետքերը քողարկելու համար դուրս նետել երրորդ հարկի պատուհանից՝ իբր ինքն է իրեն գցել: Մուղղուսու հետ նույն օրը ձերբակալվում և գնդակահարության է դատապարտվում քննիչների նրա ողջ հանցախումբը, այդ թվում՝ տեղակալ Իվան Գևորգովը և 4-րդ բաժնի պետի տեղակալ Եղբայր Նիկողոսյանը: Նույն օրը ձերբակալվում է նաև ժողկոմխորհի նախագահ Աբրահամ Գուլոյանը:

Հատուկ կարգով Մոսկվայում 1938 թ. փետրվարի 3-ին գնդակահարվում են Գևորգովը և Նիկողոսյանը, իսկ 1938 թ. փետրվարի 8-ին՝ Մուղղուսին:

1959 թ. Թիֆլիսի ներքին բանտում տեղի է ունեցել 1937 թ. և հետագա տարիների հետաքննիչներ Ռուբեն Հարոյանի և Գուրգեն Մուրադյանի դատավարությունը, որի ընթացքում նրանք հայտարարել են, որ իրենք ուձիր են գործել Կենտկոմի նախկին քարտուղարներ Գ. Հարությունյանի և Ս. Թովմայանի գիտությամբ ու կարգադրությամբ, և ավելացրել, որ իրենք սուկ հրահանգներ կատարողներ են:

Մուղղուսուն հաջորդում է բելառուս Վիկտոր Վասիլիի Խվորոստովը (1903-1939), որին հայացնում են, դարձնում Խվորոստյան, և որի առաջին հայտարարությունը հետևյալն է. «Ժողովրդի յուրաքանչյուր թշնամու համար մենք պատրաստի ունենք մեկական գնդակ»⁶⁵:

64 **Առաքելյան Վ.**, Ճակատագրի խաչմերուկներում, Եր., Երևանի համալս. հրատ., 2003, էջ 81:
65 «Գրական թերթ», 1938, 12 փետրվար, N 7:

6. ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. սեպտեմբերյան լիազումար նիստը: Ստալինը, Ամատունին, Չարենցը

1937 թ. սեպտեմբերի 15-23-ը տեղի է ունենում ՀԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերյան լիազումար նիստը: Աշխատանքն ընթացել է սեպտեմբերի 15-18-ը և եռօրյա ընդմիջումից հետո շարունակվել 22-ին՝ ավարտվելով 23-ին⁶⁶: Մասնակցում էին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ Անաստաս Միկոյանը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավար կուսակցական մարմինների բաժնի վարիչ Գեորգի Մալենկովը բաժնի երեք աշխատակիցների հետ, ԽՍՀՄ ՆԳԺԿ ներկայացուցիչ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Լավրենտի Բերիան: Նրանց հետ էր ԽՍՀՄ ՆԳԺԿ քննչական խումբը (Ալտման, Գելման և ուրիշներ):

Ընթերցվում է Ստալինի նամակը ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսակցական աշխատանքներում տեղ գտած թերությունների մասին: Շարժառիթը ՀԽՍՀ ժողովմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի մահվան հանգամանքները կոծկելն էր:

Ստալինի նամակը սեպտեմբերի 15-ի երեկոյան նիստում կարդում է Մալենկովը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՅՈՒՐՈՅԻՆ

ԽՍՀՄ Կառավարությունը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը համարում են, որ Հայաստանում գործերը, ինչպես տնտեսական, այնպես էլ կուսակցական և մշակութային, չափազանց վատ են: Գյուղատնտեսությունը տապալված է, կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունները լճացված են: Թե ուր են գնում ըստ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի պահանջի կառավարության կողմից հատկացված դրամական միջոցները, դժվար է ասել: Կուլտուրական շինարարությունը կաղում է, իսկ կուսակցական աշխատանքը դարձյալ շեղվել է կուսակցական գծից, Հայաստանի կուսակցական ղեկավարության կողմից տրոցկիստները և մյուս հակակուսակցական տարրերը չեն հանդիպում անհրաժեշտ հակահարվածի: Վերջին իրադարձությունները՝ կապված Տեր-Գաբրիելյանի «ինքնասպանության» հետ, ինչպես ֆոկուսում, արտացոլում են այն ամբողջ առավելագույն նեխվածությունն ու քայքայվածությունը, որոնք բնորոշում են Հայաստանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունների իրավիճակի արդյունքը: Դժվար է պատկերացնել, որ Տեր-Գաբրիելյանը դուրս է նետվել լուսամուտից, դա բացարձակապես անհամատեղելի է նրա երկչոտ և հաշվենկատ բնավորության հետ: Ամենից շուտ՝ նրան

66 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 25, թթ. 7-10:

դուրս են նետել և փակել են նրա բերանը, որպեսզի նա չկարողանա բացահայտել խորհրդային իշխանության թշնամիներին: Խիստ տարօրինակ է, որ Հայաստանի ղեկավարությունը անհրաժեշտ չի համարել այդ մասին հաղորդել ԽՍՀՄ Ժողկոմխորհին կամ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմին: Ցանկանում էին, երևի թե, թաքցնել այդ աղաղակող փաստը և միանտորեն ենթադրում էին, որ կհաջողվի թաքցնել:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը չեն կարող թույլ տալ, որպեսզի հայ ժողովրդի թշնամիները ազատորեն շրջեն Հայաստանում, վնասեն ժողովրդական տնտեսությունը և կազմալուծեն գյուղացիությանն ու բանվոր դասակարգին:

ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը չեն կարող թույլ տալ, որպեսզի հայ ժողովրդի թշնամիների հովանավորները ժողովրդից թաքցնեն ղեկավարության խոցերը, և այդ խոցերը քողարկելու համար ժողովրդի թշնամու սպանությունը, ով ցանկանում էր բացահայտել ազատության մեջ գտնվող ժողովրդի թշնամիներին, «ինքնասպանություն» համարել:

Որպես առաջին միջոց՝ ՀամԿ(Բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողկոմխորհը որոշել են ձերբակալել Մուրդուսուն և Գուլոյանին, որոնք չեն կարող ուղղակի պատասխանատվություն չկրել բոլոր բացահայտված այլանդակությունների համար:

Պատասխանատվությունը ինքնաբերաբար ընկնում է նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի վրա, որի կապակցությամբ և գործուղվում է ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ Մալենկովը՝ տեղում քննություն անցկացնելու համար:

8 / IX. 37

Ի. Ստալին»⁶⁷:

Հրապարակվում է պաշտոնական հաղորդագրություն. «Սեպտեմբերի 23-ին իր աշխատանքն ավարտեց Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի պլենումը: Պլենումը որոշեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղարներից հանել Հ. Ամատունուն և Ստ. Ակոպովին: Պլենումը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց ընկ. Գ. Ա. Հարությունյանին»⁶⁸:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին սեպտեմբերի 22-ին հենց դահլիճում էլ ձերբակալվում է: Նրան առնչվող մաքրագործումները ստալինյան հալածանքների երկրորդ փուլն են և տևում են մինչև 1939 թվականը:

Լիազումար նիստի աշխատանքների վերջին օրը՝ սեպտեմբերի 23-ի երեկոյան, փակ նիստում միաձայն ընդունվում է որոշում. «ա) որպես մեր-

67 Նույն տեղում, ց. 25, գ. 78ա, թթ. 1-5:

68 «Ինֆորմացիոն հաղորդագրություն», «խորհրդային Հայաստան», Եր., 1937, 26 սեպտեմբերի:

կացված հակահեղափոխականներ՝ ժողովրդի թշնամիներ Ա. Ամատունուն՝ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից, իսկ Ստ. Ակոպովին՝ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի երկրորդ քարտուղարի պաշտոնից հանել, հեռացնել նրանց Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի կազմից և կուսակցության շարքերից՝ նրանց գործը հանձնելով ՆԳԺԿ մարմիններին»⁶⁹:

Վեռացվում են Սահակ Տեր-Գաբրիելյանից հետո ժողկոմխորհի նախագահ Աբրահամ Գուլոյանը, ՆԳԺԿ աշխատակիցներ Գևորգովը, Կոստիկյանը, Դաստակյանը, Կուրսելը, Յաղուբյանը: Պատահական չէր, որ բռնադատումների այս նոր ակիբի առաջին գոհերը դարձան Բերիայի դրածոները՝ Ամատունին, Ակոպովը և Մուղդուսին, որոնց ձեռքերով էին կատարվում կենտրոնից հրահանգվող բոլոր անօրինությունները... Նրանց վերացնելով փորձում էին վերացնել բոլոր հանցավոր գործերի հետքերը:

Իսկ Չարենցը... Ամատունու և մյուսների պաշտոնանկությունից հետո Չարենցի կինը նամակով⁷⁰ դիմում է ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Անաստաս Միկոյանին՝ բանտից ազատելու Չարենցին, քանի որ նրան ձերբակալողներն իրենք էին ձերբակալվել: Սակայն, Չարենցին ազատելու փոխարեն, նոյեմբերի 23-ին՝ ցերեկվա ժամը 3-ին՝ երեխաներին կերակրելու ժամանակ, ՆԳԺԿ աշխատակիցները գալիս են նրա ետևից: Իգարելային ձերբակալելուց հետո Չարենցին այլևս այցելող, դեղորայք բերող չկար: Արդեն իսկ նրա վիճակը ծանր էր՝ հիվանդություններ, օրեր շարունակ տևած անգիտակից վիճակ, հոգեկան ու ֆիզիկական ահավոր կտտանքներ... Երևանի բանտի անմարդկային պայմաններում սահմկեցուցիչ տառապանքների մեջ 1937 թ. նոյեմբերի 27-ի առավոտյան ժամը 7-ին ամիսներ առաջ ընդամենը քառասունը բոլորած բանաստեղծը ավանդում է հոգին: Պահպանվել է մահվան տեղեկանքը.

«Տեղեկանք

Սույն թվի 27/XI-ի ցերեկվա ժամը 7-ին բանտի հիվանդանոցում մահացավ Եղիշե Չարենցը: 27. XI – 37 թ.: Ստորագրություն»⁷¹:

69 ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 25, թ. 10:
70 Նամակը տես **Չարենց Ե.**, Սորահայտ էջեր, էջ 620-621:
71 Սույն տեղում, էջ 608:

Եզրակացություններ

Եղիշե Չարենցը դարձավ 1935-1937 թթ. մոլեգնող քաղաքական հալածանքների գոհր: Իսկ այդ տարիները նրա հանճարի բարձրագույն շրջանն էին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունու անմարդկային վերաբերմունքը Չարենցի հանդեպ վերջինիս հասցրեց մահվան: Նվազագույն հոգատարության դեպքում ամեն ինչ այլ կլիներ: Իսկ նվազագույն հոգատարությունը նախ կարող էր լինել այն, որ նա չխոչընդոտեր բուժման նպատակով Չարենցի՝ արտասահման մեկնելու գործընթացը, չփակեր այդ հնարավորությունը, մանավանդ որ պաշտոնական թույլտվությունը կար, անգամ դուրս էր գրված անհրաժեշտ տարադրամբ: Եվ ապա՝ այդ վերաբերմունքը կդրսևորվեր միայն այն դեպքում, եթե Ամատունին չտրվեր Չարենցի գրական հակառակորդների սադրանքներին և չարտոներ նրա ձերբակալությունը: Շատ հնարավոր է, որ դեպքերն այլ ընթացք ունենային, մանավանդ որ Չարենցի ձերբակալությունից ուղիղ երկու ամիս անց Ամատունին՝ որպես հանրապետության կուսակցական առաջնորդ, պաշտոնանկ արվեց:

Այդ հոգատարությունը կար Խանջյանի օրոք, և բանաստեղծը Անդրերկրկոմի որոշմամբ պիտի մեկներ Փարիզ՝ բուժման: Խանջյանի սպանությունը, սակայն, ամեն ինչ գլխիվայր շուռ տվեց: Չարենցը համարվեց արդեն իսկ հակահեղափոխական հորջորջված Խանջյանի հովանավորյալ և հալածվեց որպես նացիոնալիստ, ահաբեկիչ, Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության խանգարիչ, այս ամենի հետևանքով՝ որպես ժողովրդի թշնամի:

Կյանքի վերջին տարիներին Չարենցը չլռեց. նրա ստեղծագործական բուն ու ազատ տարերքը երկնեց մեկը մյուսից տարողունակ բանաստեղծություններ ու պոեմներ, նաև տարատեսակ գրություններ, որոնցում ցուանում է քաղաքական դաժան բռնությունների իրական պատկերը: 1935-1937 թթ. Չարենցն ավելի շատ է ստեղծագործել, քան նախորդ տարիներին, իսկ նրա ստեղծագործական կյանքը տևել է 25 տարի՝ 1912-1937 թթ.: Այդ տարիների վաստակի բացահայտված էջերը, ինչպես նշեցինք, ի մի են բերված երեք մեծադիր հատորներում՝ «Անտիպ և չհավաքված երկեր» (1983), «Նորահայտ էջեր» (1996), «Գիրք մնացորդաց» (2017), որոնց հնարավոր է, որ ավելանան նոր գրքեր, որովհետև հայտնի է, որ բանաստեղծի անտիպ էջերը դեռևս ամբողջությամբ հավաքված չեն: Այդ ժառանգության ցանկացած պատառիկ պատմական վավերագիր է իր ժամանակի մասին:

Եվ այսպես՝ իշխանություններն ու իշխանավորները գալիս են ու գնում, իսկ ոգի կերտողները, անկախ նրանց հանդեպ եղած պաշտոնական վերաբերմունքից, գալիս են ու մնում. այնտեղ մի Պիղատոս

էր, որը խաչեց Հիսուս Քրիստոսին, այստեղ՝ մի Ամատունի, որ մահվան դատապարտեց եղիշե Չարենցին: Ժողովրդի մեջ ապրող հավատի առասպելական ուժը հարություն տվեց Քրիստոսին, Չարենցի հանձարը 17 տարվա (1937-1954) արգելափակումից հետո լույս աշխարհի հանեց հողի տակ թաղված նրա անտիպ ժառանգությունը և դարձրեց համաժողովրդական սեփականություն:

Դավիթ Վ. Գասպարյան – հեղինակ է առավելապես նորագույն շրջանի հայ գրականությանը նվիրված մենագրությունների, տեսական ու գրապատմական տասնյակ գրքերի, գրականության պատմության, հոդվածների ժողովածուների, Չարենցի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված բազմաթիվ աշխատությունների, գրական-քննադատական հարյուրավոր հոդվածների, ինչպես նաև դպրոցական գործող դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների:

Էլ. հասցե՝ grakanagetgasparyan@mail.ru

Summary

YEGHISHE CHARENTS: IN THE CRUCIBLE OF POLITICAL STRUGGLE OF 1937

(On the occasion of 125th birth anniversary)

David V. Gasparyan
Doctor of Philological Science

Key words – Charents, Amatuni, Khanjian, Central Committee, Union of Writers, political violence, political persecution, poetry, poem, prison, history.

Inhumane treatment of the First Secretary of the Central Committee of Communist (Bolshevik) Party of Armenia Amatuni with Yeghishe Charents led to the death of the latter. During the work of A. Khanjian as the First Secretary of the Central Committee of the C(B)PA there was a question of sending the poet to Paris for treatment by the decision of the Zakkraikom. But the murder of Khanjian on July 9, 1936 turned everything upside down. It was believed that Charents was under the patronage of Khanjian, who was declared an enemy of the nation and was persecuted.

On November 16, 1936 the NKVD authorities decided to investigate the case of Charents, charged under the articles 67 and 68 of the Criminal Code of the

Armenian SSR. He is accused of being one of the leaders of the anti-revolutionary, nationalist group of writers "November". Charents categorically denies all charges, defends himself and gives explanations. From the same political positions, Charents was harshly criticized at the general meeting of Armenian writers on April 17-21, 1937.

Despite all this, in the last years of his life, the free creative element of Charents produced some great poetry, as well as works that show the real picture of brutal political violence. In 1935-1937, Charents created more than in previous years. His creative life lasted 25 years – 1912-1937. The discovered pages of the works of those years are collected in three large volumes: "Unpublished and unfinished works" (1983), "Newly-appeared pages" (1996), "The Book of Remnants" (2017), to which new books can be added, because the unpublished pages of the poet's oeuvre have not yet been fully studied. Each part of this heritage is a historical document of its time.

Hence, authorities come and go, but the spirit-creators, regardless of the official attitude towards them, come and stay. There was Pilate, who crucified Jesus Christ, and there was Amatuni, who sentenced Yeghishe Charents to death. The mythical power of the people's faith resurrected Christ, and the genius of Charents, after 17 years (1937-1954) of prohibition, unveiled the unpublished legacy of the poet and made him a national heritage.

ЕГИШЕ ЧАРЕНЦ В ГОРНИЛЕ ПОЛИТИЧЕСКОЙ БОРЬБЫ 1937 ГОДА

В связи с 125-летием со дня рождения

Давид В. Гаспарян
Доктор фил. наук

Ключевые слова - Чаренц, Амадуни, Ханджян, ЦК, Союз писателей, политическое насилие, политический розыск, поэзия, поэма, тюрьма, история.

Бесчеловечное обращение первого секретаря ЦК КП(б)А Амадуни с Егише Чаренцем привело к гибели последнего. Во время работы А. Ханджяна на должности первого секретаря ЦК КП(б)А стоял вопрос об отправке поэта на лечение в Париж по решению Заккрайкома. Но убийство Ханджяна 9 июля 1936 г. перевернуло все с ног на голову. Считалось, что Чаренц находился под покровительством Ханджяна, который был объявлен врагом народа и подвергался гонениям.

16 ноября 1936 г. органы НКВД приняли решение расследовать дело Чаренца, обвиняемого по статьям 67 и 68 УК Армянской ССР. Его обвиняют в том, что он был одним из лидеров антиреволюционной, националистической группы писателей «Ноембер». Чаренц категорически отвергает все обвинения, защищается и дает объяснения. С тех же политических позиций Чаренц жестко критикуется и на общем собрании армянских писателей 17-21 апреля 1937 г.

Несмотря на все это, в последние годы жизни свободная творческая стихия Чаренца создала поэмы и стихотворения, а также сочинения, в которых показана реальная картина жестокого политического насилия. В 1935-1937 гг. Чаренц создал больше, чем в предыдущие годы. Его творческая жизнь продлилась 25 лет – 1912-1937 гг. Обнаруженные страницы произведений тех лет собраны в три больших тома: «Неизданные и несобранные произведения» (1983 г.), «Новоявленные страницы» (1996 г.), «Книга паралипоменон» (2017 г.), к которым могут быть добавлены еще новые книги, потому что еще не до конца изучены неизданные страницы творчества поэта. Каждая часть этого наследия является историческим документом своего времени.

Таким образом, авторитеты приходят и уходят, а духотворцы, вне зависимости от официального отношения к ним, приходят и остаются. Был Пилат, распявший Иисуса Христа, был Амагуни, приговоривший Егише Чаренца к смерти. Мифическая сила веры народа воскресила Христа, а гений Чаренца, после 17 лет (1937-1954 гг.) запрета, обнажил погребенное под землей неизданное наследие поэта и сделал его национальным достоянием.

REFERENCES

1. “Grakan t’ert’”, Yer., 1937, 23 april, N 12, 1 mayis, N 13, 12 hunis, N 18, 1989, 17 mart, N 12 (**In Armenian**).
2. “Hayots’ lezu yev grakanut’yun”, Yer., 2017, N 5 (**In Armenian**).
3. “Khorhrdayin Hayastan”, Yer., 1937, 26 september, N 262 (**In Armenian**).
4. **Aṙak’elyan V.**, Chakatagri khach’meruknerum, Yer., 2003 (**In Armenian**).
5. **Ch’arents’ Ye.**, Antip yev ch’havak’vats yerker, Yer., 1983 (**In Armenian**).
6. **Ch’arents’ Ye.**, Girk’ mnats’ordats’, Yer., 2017 (**In Armenian**).
7. **Ch’arents’ Ye.**, Verjin khosk’, Yer., 2014 (**In Armenian**).
8. Ch’arents’i het. Husher, Yer., 1997 (**In Armenian**).
9. Grakanut’yan yev arvesti t’angaran, Ch’arents’i fond, N 35-I, 85, 164-165 (**In Armenian**).
10. Grakanut’yan yev arvesti t’angaran, Groghneri miut’yan fond, N 16-17 (**In Armenian**).
11. Hayastani azgayin arkhiv, f. 1, ts’. 17, g. 25, t’t’. 7-10 (**In Armenian**).
12. Hayastani azgayin arkhiv, f. 1, ts’. 25, g. 78 a, t’t’. 1-5 (**In Armenian**).